

ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՂ

ՀԱՅՈՑ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



ՏԱՐՐԱԿԱՆ Բ. ՏԱՐԻ



“ՓԱՐՈՍ,, ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



Կ. ՊՈԼԻՍ

Տպագրութիւն Ծ. Արզուման

1913



9(47.925)  
Գ-476

ՀԱՅ

6919

19 AUG 2006

ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

19 AUG

9(47.925)

Գ-4746

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԱՐՐԱԿԱՆ Բ. ՏԱՐԻ

7 1004  
16935



“ՓԱՐՈՍ,, ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՉՈՒՄԱՆ  
1913

18.03.2013

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



(ՏԱՐՐԱԿԱՆ Բ.)



Ա. ԴԱՍ

Ա Ր Մ Ե Ն Ա Կ

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ  
Օ. ԱՐԶՈՒՄԱՆ  
№ 162

Սիրելի մանուկներ,

Դուք արդէն գիտէք թէ մեր ազգին նա-  
հապետը եղած է Հայկ, որուն անունով մեր  
ժողովուրդը կոչուած է Հայ, իսկ մեր երկիրը՝  
Հայաստան:

Դուք գիտէք նաև թէ Հայկ մեծ պատերազմ  
մը մղեց Բէլին դէմ, անոր յաղթեց և զայն սպան-  
նեց: Հայկ երկար տարիներ խաղաղ կերպով  
կառավարեց իր երկիրը և մեռաւ:

Հայկ ունեցաւ շատ որդիներ: Այդ որդիներ-  
րէն մէկն էր Արմենակ:

Հայկի մեռնելէն ետքը Արմենակ իր եղբայր-  
ներուն տուաւ Հայկաշէնը, որ իր հօրը շինած

գիւղն էր : Ինքն ալ առաւ իր ընտանիքը և գնաց  
գէպի հիւսիսային արեւելեան կողմը :

Նա անցաւ բարձր լեռներու միւս կողմը ,  
տեսաւ ընդարձակ հովիտ մը , որ իր լայնու-  
թեամբ կը տարածուէր արեւմուտքէն արեւելք :

Դաշտը չըջապատուած էր լեռներով . անոնց  
ստորոտէն կը բլիւսէին յստակ , ականակիտ աղ-  
բիւրներ և կը կազմէին բազմաթիւ գետակներ ու  
ձորեր :


Գետակները հեղու թեամբ կը սահէին լեռ-  
ներու տակէն , դաշտի եզերքներէն և վերջը  
իրարու հետ խառնուելով կը դառնային մեծ  
գետ : Գետը հետզհետէ կ'ուռենար , կը լայննար  
և ցոլացող սուկիէ դօտիի մը պէս կը գօտեւորէր  
հովիտը :

Դաշտի հարաւային կողմը , կարծես երիտա-  
սարդ լեռներու մէջ ծերունիի մը պէս , նստած  
էր սպիտակափառ ձիւնապատ լեռ մը : Ան բու-  
սած էր երկրէն շիտակ գէպի վեր , և ամէնէն  
վեր բարձրացուցած էր իր սրածայր գագաթը :

Անոր դիմաց , հիւսիսային կողմը , լայն կեր-  
պով փռուած էր ուրիշ ձիւնապատ լեռ մը , որուն  
գագաթը բարձի վրայ դրուած թագի կը նմանէր :

Արմենակ իջաւ այդ ընդարձակ հովիտը , ան-  
ցաւ մեծ գետի միւս ափը , և բնակեցաւ հիւսի-  
սային լեռան ստորոտը :

Իր անունով լեռը կոչեց ԱՐՁԳԱՏ , իսկ իր  
բնակած երկիրը անուանեց Արագածոտն :



Արագած լեռ

Այդ հովիտին մէջ նա գտաւ առաջուրնէ հոն  
բնակող մարդեր և զանոնք իրեն հնազանդեցուց :

**Հարցարան.** — Հայկի որդիին անունն ի՞նչ էր . — Արմենակ  
որո՞ւ տուաւ Հայկաշէնը . — Ինք ո՞ւր գնաց . — Առջևը ի՞նչ ելաւ . —  
Լեռներու տակէն ի՞նչ կը բլիւսէին . — Հիւսիսային կողմի լեռան  
անունը ի՞նչ դրաւ . — Իր բնակած երկրին անունը ի՞նչ կոչեց :


**Քարոյական քելագրութիւն.** — Հայկաշէնը իր եղբայր-  
ներուն տալը կարելի է նկատել եղբայրսիրական վարմունք մը և  
շեշտելի զայն : Կարելի է նաև այս դասին մէջ տարրական ծանօ-  
թութիւններ տալ հովիտի , գետերու և լեռներու մասին :

### Բ. ԴԱՍ

#### ԱՐՄԱՅԻՍ ԵՒ ՇԱՐԱՅ

Արմենակ ունեցաւ որդի մը, որուն անունն էր Արմայիս :

Արմայիս շատ բարի նահապետ մը եղաւ, խաղաղութեամբ կառավարեց իր երկիրը և գիւղեր ու աւաններ շինեց :



Արմաւիրի բլուրը

Հօրը մահէն ետքը գետի ափին վրայ գըրա- նուած բլուրի մը վերեւ շինեց աւան մը, որուն անունը դրաւ իր անունով՝ Արմաւիր :

Արմաւիր աւանը յետոյ ընդարձակուեցաւ և

ամուր քաղաք մը դարձաւ : Հոն մինչև անգամ թագաւորներ կը նստէին :

Արմայիս ունէր թոռ մը, որուն անունն էր Արաս : Այդ թոռան անունով գետը կոչեց Երասիս :

Արմայիս ունէր շատակեր որդի մը, անոր անունն էր Շարայ : Շարայ ունեցաւ շատ զաւակ- ներ : Արմայիս Շարայի և անոր ընտանիքին հա- մար բնակելու տեղ տուաւ Արագածի միւս կողմը, այն բարեբեր և արգաւանդ դաշտը, որ մինչև հիմակ ալ նշանաւոր է իր առատ հունձքերով :

Շարայի անունով այդ բերրի դաշտը կոչուե- ցաւ Շիրակ :

Անոր շատակերութիւնը շատ նշանաւոր էր . հայ գիւղացիները երբ շատակեր մարդու մը հան- դիպէին, կ'ըսէին .

«Թե քո Շարայի որդին է,  
Մեր Շիրակայ ամբարձն չեն» :


«Եթէ քու որկորը Շարայի որկորն է, մեր ամբարները Շիրակի ամբարները չեն», այսինքն՝ թէ մենք քեզ պահելու համար Շիրակի լեցուն ամբարները չունինք :

Հարցարան. — Արմենակի որդիին անունը ի՞նչ էր. — Ար- մայիս ի՞նչ շինեց, ո՞ւր. — Գետին անունը ի՞նչ դրաւ. — Որո՞ւ անունով. — Արմայիսի տղուն անունը ի՞նչ էր. — Շարայ ինչո՞վ նշանաւոր էր. — Արմայիս ո՞ր երկիրը տուաւ անոր. — Այդ երկիրը կամ դաշտը ի՞նչ կոչուեցաւ. — Գիւղացիները ի՞նչ կ'ըսէին եթէ շատակեր մը տեսնէին. — Ի՞նչ ըսել կ'ուզէին :

Քարոյական թելադուրիւն. — Ձգացնելու է մանուկներուն թէ երասխը Հայերու ամէնէն աւելի սիրած գետը եղած է կարելի է յիշել «Մայր Արարտի» երգը: Նոյնպէս կարելի է շատապէրութեան մասին ընել կարգ մը թելադուրութիւններ, զգուշացնելու համար մանուկները այդ մոլութիւնէն՝ որ անասնական է աւելի:

Գ. ԴԱՍ


ԱՄԱՍԻԱ ԵՒ ԳԵՂԱՄ



Ամասիա

Արմաշիս ուրիշ որդի մըն ալ ունէր. անիկա ամէնէն մեծն էր իր որդիներուն մէջ: Անոր անունն էր Ամասիա:

Արմենակի, Արմայիսի և Ամասիայի ժամանակներուն ամէն նահապետ իր կալուածը կամ երկիրը կուտար երէց որդիին, իսկ միւս որդիներուն




Մասիս լեռ

րուն համար ալ իր ողջութեանը նոր հողեր կը գտնէր և կը շէնցնէր: Այսպէս ըրաւ Ամասիա: Ամասիա ունէր երէց որդի մը, որուն անունն էր Գեղամ:


Արմաիրը, որ իր կալուածն էր, թողուց Գեղամին, իսկ կրտսեր տղաները առաւ Երասխի միւս կողմը տարաւ: Այդտեղ անոնց համար գիւղեր շինեց և հոն բնակեցուց:

Երկու մեծ լեռներն ալ իր անունով կոչեց Մեծ Մասիս և Փոքր Մասիս, իսկ Մասիսի գաշտն ալ անուանեց Մասեացոսն:



Գեղամայ ծովակը

Գեղամն ալ իր հօրը մահէն ետքը եղաւ նահապետ : Արմաիրը տուաւ իր որդի Հարութին, իսկ ինքը գնաց գէպի վեր, գէպի արեւելք :



Գեղամայ ծովի ձուկ

Անցաւ լեռ մը և հասաւ անուշ ջուրով ծովակի մը քով : Այդ ծովակին մէջ կան բազմաթիւ վարմրախայտ ձուկեր, որոնք շատ սիրուն և համեղ են :

Գեղամ լեռան անունը դրաւ իր անունով՝ Գեղ, ծովն ալ կոչեց Գեղամայ ծով, որ կը կոչուի նաև Սեւանայ ծով : Այդ ծովին մէջ կղզի մը կայ, ուր հիմակ կը գտնուի եկեղեցի :

**Հարցարան.** — Արմայիսի ո՞վ յաջորդեց. — Հին առին նահապետները որո՞ւ կուտային իրենց կալուածը. — Ամասիա որո՞ւ տուաւ Արմաիրը. — Ինք ո՞ւր գնաց. — Ինչ ըրաւ. — Լեռան անունը ի՞նչ դրաւ. — Դաշտը ի՞նչ կոչեց. — Գեղամ ի՞նչ ըրաւ. — Ո՞ր գնաց. — Ծովակին անունը ի՞նչ դրաւ. — Այդ ծովակին մէջ թ՞նչ կը գտնուի :

**Փարոյական քելադուրիւն.** — Այս գասին մէջ կ'արժէ դիտենել տղաներուն թէ Հայկ նահապետէն սկսեալ իրմէ ետք եկող նահապետները, ամէնքն ալ կամաց կամաց դրաւած են նոր երկիրներ և ընդարձակած են իրենց հայրենի կալուածը : — Ամասիա նահապետին և Ամասիա քաղքին անունին նմանութենէն օգտուելով ուսուցիչը կրնայ ծանօթութիւններ տալ վերջինի մասին :

## Գ. ԴԱՍ

### Ա Ր Ա Գ Ե Ղ Ե Յ Ի Կ (\*)

Սիրելի մանուկներ,

Դուք լաւ գիտէք որ մենք ունէինք Արա Գեղեցիկ անունով նահապետ մը, որ պատերազմեցաւ Շամիրամի հետ և սպաննուեցաւ :

(\*) Արա Գեղեցիկ աւանդակէպին այս վարեանդը, թէև շատ մը կողմերով կը տարբերի մեր աւանդական զրոյցէն, բայց մենք անհրաժեշտ նկատեցինք քանի մը դասով ներկայացնել զայն, Այս

Այսօր ես ձեզի պիտի պատմեմ ուրիշ Արա Գեղեցիկի մը պատմութիւնը, որ քիչ մը նման է մեր Արայի պատմութեան :

Շատ դարեր առաջ Բաբելոնի մէջ թագաւոր մը կար : Նա առիւծի պէս քաջ էր, և սուրը ձեռքը կը պաշտպանէր իր երկիրը :

Սակայն յանկարծ կուրացան անոր աչքերը, անոր բազուկներուն ոյժը կտարեցաւ և նա ստիպուեցաւ թողուլ պատերազմի դաշտը :

Շատ բժիշկներ գացին եկան, շատ կախարհներ փորձեցին իրենց հնարագիտութիւնը, սակայն բան մը չկրցան ընել :

Յուսահատ նստած էր թագաւորը իր գահին վրայ, պալատին մէջ : Նա երեք որդի ունէր, որոնք շրջապատած էին զայն :

Յանկարծ ներս մտաւ ալեզարդ ծերունի մը, խոնարհեցաւ անոր առջև և ըսաւ .

— Թագաւորը ապրած կենայ, ես դտայ աչքերուդ դեղը . այդ միայն Շամիրամ թագուհին մօտ կը գտնուի : Վան շատ հեռու տեղ չէ, մէկը զրկէ որ բերէ . այդ դեղը կը բժշկէ քեզ ու կ'երիտասարդայնէ :

վարեանդը շատ պէտք պիտի ըլլայ քննական հայ պատմութեան մէջ, ուր ունինք մենք էրի մը կամ ԱրԱի մը յիշատակութիւնը : Այս վերջինին համար կ'ըսուի թէ հայ էր, Բաբելոնի մէջ քիչ մը Ժամանակ իշխեց ու սպանուեցաւ : Այս աւանդավէպը կ'առնենք Ազգագրական Հանդիսէն :

— Դժուար դեղ առաջարկեցիր, ո՛վ ծերուկ, պատասխանեց թագաւորը, չե՞ս գիտեր որ ես և Շամիրամ թշնամի եղած ենք, միթէ յայտնի չէ՞ որ Շամիրամ կ'ուզէ իմ որդիս, Արա գեղեցիկը յափշտակել : Ո՛չ, ո՛չ, հեռացիր, Շամիրամ ինձի դեղ չի տար :

Դուրս ելաւ ծերունին յուսախար, տխուր :

Ծերուկը երբ հեռացաւ, Արա Գեղեցիկ, թագաւորի կրտսեր որդին, նա որ չնարի հասակ ունէր և նազելի դէմք, իր հօրը առջև խոնարհեցաւ և ըսաւ .

— Թոյլ տուր ինձի, հայրիկ, որ ես երթամ Շամիրամի մօտ . ե՛ս միայն կարող եմ այդ դեղը անկէ խլել :

— Ո՛հ, ո՛չ, պատասխանեց թագաւորը, աչքերուս լոյսը կորսնցնելէս ետքը, կեանքիս յոյսն ալ չեմ ուզեր կորսնցնել : Շամիրամի ճանկն իյնալէդ ետք այլևս չես կրնար վերադառնալ :

— Երդում կ'ընեմ քեզի, հայրիկ, որ եթէ աստուածները զիս չմեռցնեն Շամիրամի սուրով, պիտի վերադառնամ աչքերուդ դեղով : Օրհնէ՛ զիս, ա՛՛ւր սուրդ :

— Օրհնութիւնս քեզի պահապան ըլլայ և արքայական սուրս քեզի պաշտպան : Գնա՛ և մի՛ մոռնար քու երդումդ :

Համբուրեց Արա իր հօրը ձեռքը, առաւ ար-



— Հոգ մի՛ ըներ, պատասխանեց Արա, դուռը բաց, մեզ պաշտպանելը մեր գործն է։

Աղջիկը դուռը բացաւ, ներս առաւ զանոնք և արտասուելով պատմեց թէ դեւը փախցուցած է զինքը և բանտարկած է այս ամայի բանտին մէջ։

— Այսօր ո՞ր կողմը գնաց, հարցուց Արա Գեղեցիկ։

— Դէպի արեւմուտք, պատասխանեց աղջիկը, որուն անունը Խազալ էր։

— Ուրեմն արեւելքէն պիտի վերադառնայ, ըսաւ Արա։

— Այո՛, արեւելքէն, պատասխանեց Խազալը

— Լաւ, ըսաւ Արա, երթանք, պատառ մը հաց տուր մեզի որ ուտենք, իսկ դու բարձրացիր պատշգամբ, երբ որ նա գայ, մեզի իմացուր։

Խազալը զանոնք ներս տարաւ, սփռոցը փռեց, զանազան որսերէ պատրաստուած կերակուրներ դրաւ անոնց առջև և ինքը բարձրացաւ պատըշգամբ։

Երեկոյեան երբ արևը մարը կը մտնէր, Խազալ տեսաւ որ արեւելեան կողմէն ահագին փոթորիկ մըն է փրթած և դէպի բերդը կուգայ։ Իսկոյն իմաց տուաւ Արային, թէ ահա դեւը կուգայ։ Արա անմիջապէս առաւ իր հօրը սուրը և իր եղբայրներուն պատուիրելով որ հանգիստ նրստին, դուրս թռաւ ու դիմաւորեց դեւը։

Սա զարմացած բացականչեց. «Ես գացած էի որս փնտռելու, մինչդեռ որսը իր սաքով իմ դուռն է եկեր։»

Բայց հազիւ կրցաւ իր ձեռքը բարձրացնել, երբ Արայի սուրը շողաց անոր գլխուն վրայ։ Խազալ պատշգամբէն տեսաւ որ դեւը երկու կտոր ըրած, Արան իր սուրը ձեռքը դէպի բերդ կուգար։ Ուրախութեամբ վար վազեց, փաթթուեցաւ Արային և ըսաւ.

— Ազատեցիր կեանքս, ես քու կինդ եմ։

— Ո՛չ, պատասխանեց Արա, դուն իմ մեծ եղբորս հարս պիտի ըլլաս։ Անոր ձեռքէն բռնեց ու մեծ եղբօրը տարաւ։

Նորէն սփռոցը փռուեցաւ և ուրախութեան աղաղակները մինչև լոյս թնդացուցին բերդին ժայռոտ պարիսպները։

Երբոր լուսցաւ, Արա առաւ իր սուրը ու միջակ եղբօրը հետ ուզեց ճամբայ իյնալ։ Մեծ եղբայրը ուզեց միասին երթալ, բայց Արա արգիլեց և ըսաւ.

— Կեցիր և հարսին խնամք տար։ Խազալ նորէն փարեցաւ Արային և լալագին ըսաւ.

— Թող աչքիս արցունքը կեանքդ փրկելու պատճառ ըլլան. բարով երթաս, բարով գաս։

Հարցարան. — Արա և իր եղբայրները ճամբան ինչի՞ հանդիպեցան. — Ի՞նչ պատմեց Խազալը. — Արա ի՞նչ ըսաւ. — Դեւը ի՞նչպէս սպանուեցաւ. — Արան ի՞նչ ըսաւ Խազալին։

Բարոյական քելադրութիւն. — Դեղեցիկ նիւթ է այս-  
թազալի երակտագիտութիւնը, Արայի եղբայրսիրութիւնն ու քա-  
ջասրտութիւնը ընդլայնուելիք թեւադրութեան նիւթեր են:

## 2. Դ Ա Ս

### ԱՐԱՅԻ ԵՐԿՐՈՐԿ ՔԱՋՈՒԹԻԻՆԸ

Երկու եղբայրները նորէն ճամբայ ինկան  
գացին: Շատ սարեր, ձուեր անցան, ճամբայ  
կտրեցին, վերջապէս եկան հասան նոր բերդի մը  
առջև: Այդ բերդը փորուած էր բարձր ժայռի  
մը մէջ:


Հոս ալ ժայռին գագաթը պատշգամ շին-  
ուած էր, որուն վրայ հիւրի փերի, լուսեղէն աղ-  
ջիկ մը կանգնած էր:

— Խեղճ մարդեր, ձայն տուաւ աղջիկը,  
ի՞նչպէս դուք ձեր ոտքով եկեր ինկեր էք այն  
գազան դեւին ձեռքը, որ զիս յափշտակեց հորս  
գիրկէն: Փախէ՛ք, ազատուեցէ՛ք, քանի ժամա-  
նակ կայ:

— Այդ դեւը ի՞նչպէս բան է, ըսաւ Արա,  
եկուր դուն դուռը բաց, ես դեւին հետ բարե-  
կամ կ'ըլլամ, մեր կեանքն ալ կազատեմ քու-  
կըն ալ:

Աղջիկն իջաւ, դուռը բացաւ ու ներս տա-

նելով հիւրասիրեց: Երեկոյեան մօտ աղջիկը Ա-  
րային ըսաւ. « Դեւին գալու ժամանակն է, ի՞նչ-  
պէս պիտի բարեկամանաս հետը »:



Ժայռաբերդը

— Դուն պատշգամ ելիր և երբ գայ, ինձի  
խմաց տուր, ես բարեկամանալու եղանակը շատ  
լաւ գիտեմ:

Աղջիկը վեր ելաւ և քիչ ժամանակէն ետք  
գոչեց. « Ահա դեւը սև ամպի պէս կուգայ »:

Արան իսկոյն սուրը մէջըը կապեց և դիմաւորեց դեւը :

— Բարի լինի տեսութիւննիս , բարեկամ , ըսաւ Արա :

Իեւը կատղեցաւ և որոտաց . « Ո՞վ ես դուն , ստորին արարած , որ ինքզինքդ բարեկամ կը կոչես ինձի . շատ ժամանակ է որ մարդու միսին կարօտն եմ » :

— Բարեկամութիւնս չընդունեցիր՝ սուրս ընդունէ , ըսաւ Արա , և մէկ հարուածով երկու կտոր ըրաւ :

— Եթէ քաջ ես հարուած մըն ալ տուր , գոչեց դեւը :

— Մօրմէս մէկ անգամ ծնած եմ , հարուածըս ալ մէկ պիտի ըլլայ , պատասխանեց Արա , որովհետեւ եթէ երկրորդ հարուածը տար , դեւը նորէն կը կենդանանար :

Արինաթաթախ սուրը ձեռքը վերադարձաւ Արա . զայն դիմաւորեց աղջիկը և համբուրեց անոր սիրտը : « Բախտաւոր էիր , ըսաւ Արա , և ես կ'ուզեմ աւելի բախտաւորեցնել քեզ , այսուհետեւ դուն իմ եղբորը կինը պիտի ըլլաս » :

— Ի՞նչպէս թէ եղբորդ կինը , ես քուկինդ ըլլալ կ'ուզեմ :

— Ոչ , պատասխանեց Արա , քանի որ մեծ եղբայրս ամուսնացած է , ինձի չի վայելել ամուսնանալ :

— Թող քու կամքն ըլլայ , ըսաւ աղջիկը :  
Արան բերդ տարաւ զայն և տուաւ եղբորը :  
Ամբողջ գիշերը կերան , ուրախացան : Առտուն Արա կ'ուզէր ճամբայ ելնել : Եղբայրը պատրաստուեցաւ անոր ընկերանալու :

— Ո՛չ , ըսաւ Արա , քեզի համար պակասութիւն է , և ինձի համար ամօթ , որ դու ամուսինդ և իմ հարսը մինակ ձգես և հետս գաս : Եղբայրը հնազանդեցաւ : Աղջիկը համբուրեց Արայի սիրտը և արտասուելով ըսաւ .

— Աչքիս արցունքները թող լուսաւորեն քու մութ ճամբան :

Արան բաժնուեցաւ ու միայնակ ճամբայ ինկաւ :


Հարցարան . — Երկու եղբայրները ինչի՞ հանդիպեցան . — Այս անգամ ի՞նչ պատահեցաւ . — Արա ի՞նչ ըրաւ :

Քարոյական քելադուրիւն . — Ինչպէս նախորդ նոյնպէս այս դասին մէջ բացի Արայի , աղջկան ու եղբօր բարի զգացումները վեր առնելէ , կարելի է անցողակի շեշտել որ հին մարդիկ կը հաւատային թէ կան դեւեր , որոնք մարդու կերպարանքով գերբնական էակներ էին :

### է. ԴԱՍ

#### ԶՈՒԱՐԹ ԵՒ ԱՐԱ

Միայնակ ճամբայ ինկաւ Արա Գեղեցիկ ու գնաց, գնաց, հասաւ հրաշալի մարգագետին մը, որուն մէկ ծայրը, բլուրին վրայ, բերդ մը կը բարձրանար: Այդ բերդին քովերը կային ուրիշ



Զուարթի բերդը

բերդերու մնացորդներ: Արա մօտեցաւ բերդին և տեսաւ դրան վերեւ, պատշգամին վրայ լուսինի նման աղջիկ մը, որուն աչքերը կը փայլէին առտուան Արուսեակ աստղին պէս:

Աղջիկը Արան տեսնելուն պէս, գոչեց.

— Խեղճ երիտասարդ, ճամբադ կորսնցուցե՞ր ես, որ եկեր ինկեր ես դեւին ճանկը: Շո՛ւտ, հեռացիր այստեղէն և ազատէ՛ ինքզինքդ և իմ կեանքը: Եօթը գլխանի դեւը ուր է ուր չէ կուգայ և մեծ կտորը ականջդ կը ձգէ:

— Շատ խօսիլ պէտք չէ, եկո՛ւր դուռը բաց, ես գիտեմ քու դեւին հետ վարուելուն կերպը:

Աղջիկը դուռը բացաւ և հիանալով Արայի գեղեցիկութեան վրայ աղի արցունք թափեց ըսելով. «Ես մահս սիրով ընդունեցի, բայց ի՞նչպէս այսպիսի երիտասարդ մը դեւին կերակուր պիտի դառնայ»:

— Ե՞րբ կուգայ այդ դեւը, հարցուց Արա:

— Հիմակ ժամանակն է. որսի գացած է:

— Լա՛ւ ուրեմն, ես քիչ մը հանգստանամ. իսկ դուն ելիր պատշգամը և երբոր գայ՝ ինձի իմաց տուր:

Աղջիկը վեր ելաւ, սպասեց ու տեսաւ որ դեւը կուգայ: Շուտով Արային լուր տուաւ: Արա սուրը քաշեց և դուրս թռաւ: Դեւը երբ Արան տեսաւ, ախորժակը գրգռուեցաւ, թուքը վազեց բերանէն և այնպէս ակռաները կճրտեց, որ կարծես կայծակեց ու որոտաց:

Արա սարսափեցաւ, բայց ոյժը հաւաքեց, վրան վազեց ու իր հօրը թրի մէկ հարուածով թուցուց դեւի եօթը գլուխն ալ: Իսկոյն արեան վտակներ սկսեցին հոսիլ, դեւը թաւալգլոր ինկած՝ գոչեց.

— Զա՛րկ, անգամ մըն ալ զարկ, որ մահս շուտով անցնեմ:

— Մօրմէս մէկ անգամ ծնած եմ, հարուածս

ալ մէկ պիտի ըլլայ, պատասխանեց Արա և դարձաւ դէպի բերդը: Աղջիկը անոր դէմ վազեց տարցունքի փոխարէն մարգրիտներ թափեց աչքերէն: Աւրախ զուարթ վերադարձան բերդը, նրստան հանգստանալու:

— Ազատիչս, ըսաւ աղջիկը, կ'ուզէի գիտնալ թէ ո՞վ ես դուն, ի՞նչ է քու անունը:

— Ես Արամ թագաւորի որդին եմ և անունս Արա է, իսկ դու ո՞վ ես և ի՞նչ է քու անունը:

— Ես ալ Պռոշ թագաւորի աղջիկն եմ, անունըս Զուարթ է, անորէն դեւը զիս փախցուց հօրս տունէն, բայց դուն լսած ես հօրս պատմութիւնը:

— Ո՛չ, պատասխանեց Արա, չեմ լսած, պատմէ՛ որ գիտնամ:

«Լաւ» ըսաւ Զուարթը և սկսաւ իր հօրը պատմութիւնը:

**Հարցարան.** — Միայնակ ո՞ւր գնաց Արա. — Բերդը ո՞ւր կը գտնուէր. — Ի՞նչ ըսաւ աղջիկը. — Արա ի՞նչպէս սպաննեց եօթը կլիսանի դեւը. — Աղջիկը ի՞նչ ըսաւ:

**Քարոյական րեկադրօրիւն.** — Այս հատուածին մէջ Զուարթի արցունքը Արայի սպանման հաւանականութեան առջև ամէնէն աչքառու դրուագն է երբև նիւթ բարոյական թելադրութեան:

### Ը. Դ Ա Ս

#### ՊՈՌՇ ԹԱԳԱՒՈՐԻ ԹՈՒՐԸ

Զուարթը սկսաւ պատմել իր հօրը պատմութիւնը:

« Հայրս, Պռոշ թագաւորը, պարզ մարդ մըն էր: Նա կը բնակէր Մուշի մօտերը, Մանազկերտի մէջ: Այնտեղ ծովակ մը կայ, փոքրիկ, բայց շատ խորունկ: Այս ծովակին շուրջը յաճախ կը շրջէր հայրս:

« Անգամ մը կը տեսնէ որ հովիւ մը գետնէն քար մը կ'առնէ և կը նետէ նախիրէն հեռացող կովի մը վրայ: Քարը կը ծակէ կովին փորը և գետին կը գլորէ զայն: Հայրս կը հասկնայ որ գերբնական բան մը պիտի ըլլայ այստեղ, կը մօտենայ կովին ինկած տեղին և կը գտնէ քառակուսի երկաթի կտոր մը:

« Կ'առնէ այդ երկաթը և կը տանի զինագործին, որ թօր մը շինէ այդ երկաթէն: Զինագործը կ'առնէ, կը նայի երկաթին, և կը հասկնայ անոր ինչ յատկութիւն ունենալը և կ'ըսէ.

— Ետտ լաւ, կը շինեմ, դու գնա:

— Չէ, կ'ըսէ հայրս, իմ աչքիս առջևը պիտի շինես:

— Ի՞նչպէս կարող եմ աչքիդ առջևը շինել,

քանի որ ամբողջ շաբաթ մը պիտի աշխատիմ վրան :

— Դէ՛հ , քանի որ այդպէս է , դիր իսկոյն ադ հնոցը և այդ երկաթին մէկ կտորը հերիւն մը շինէ և ինծի տուր , շաբաթէն կուգամ սուրը կ'առնեմ :

Վարպետը ճարահատ՝ անոր ներկայութեանը հերիւն մը կը շինէ և կուտայ : Հայրս հերիւնը կ'առնէ և կ'երթայ : Վարպետը երեք թուր կը շինէ իրարու նման , մէկը հօրս տուած երկաթէն , իսկ միւսները ուրիշ երկաթէ : Որոշուած օրը հայրս կ'երթայ զինագործին մօտ և թուրը կ'ուզէ : Վարպետը հասարակ երկաթէ շինուած թուրը կը բերէ և կուտայ հօրս : Հայրս կը ճանշնայ և կը բարկանայ զինագործին վրայ . ցոյց տալու համար թէ չէ խաբուած , հերիւնը կը խոթէ թուրին մէջ , որ կը ծակի ու կը կտորի : Վարպետը վերջապէս բուն թուրը կը բերէ , հայրս կ'առնէ ու կը մեկնի :

« Այդ սուրին դէմ ոչ մէկ բան կը դիմանար : Նա կայծակի թուր էր , երկինքէն ինկած : Հայրս այդ թուրով մեծ յաղթութիւններ կը տանի և կը դառնայ թագաւոր : Շամիրամ թագուհին , որ շատ թագաւորներու յաղթած էր , ուզեց այդ թուրն ունենալ , շատ անգամ անոր դէմ պատերազմի ելաւ , բայց չարաչար յաղթուելով ետ քաշուեցաւ :

« Հայրս ունեցաւ զիս ու երեք եղբայնե-

քըս : Իմ գեղեցկութեան համբաւը Շամիրամի ականջն հասաւ : Նա մտածեց զիս փախցնել հօրս տունէն , յուսալով որ հայրս իբրև փրկանք կուտայ այդ թուրը և կ'ազատէ զիս : Այդ պատճառով կը կանչէ իր երեք դեւերը և խստիւ կը պատուիրէ , որ գան փախցնեն զիս :

« Դժբախտ օր մը , երբ ծովակին եզերքը կ'զբօսնէի , այս եօթն գլխանի դեւը եկաւ գրկեց ու փախցուց զիս , այս բերդը բերաւ : Հայրս արդէն ծերացեր էր և չկրնալով տոկալ այս փիշտին , սկսաւ տանջուիլ , մահուան օրերը մօտեցան :

« Օր մը կը կանչէ իր որդիները և կ'ըսէ մեծ որդիին .

— Մահուընէս ետքը շատ կուիւներ կրնան ըլլալ այս թուրին պատճառով ձեր մէջ , ուստի ա՛ռ , տար ծովը ձգէ :


« Եղբայրս գացեր է ծովին եզերքը , թուրը քարին զարկեր է , տեսեր է որ պանիրի պէս կը կտրէ . մեղքեր է ծովը ձգելու , քարի մը տակ պահեր է ու գացեր է հօրս քով :

— Ի՞նչ եղաւ ծովը երբ թուրը ձգեցիր , հարցուցեր է հայրս :

— Ոչինչ , բան մը չեղաւ , պատասխաներ է եղբայրս :

— Ուրեմն չես ձգած , գնա՛ իսկոյն ետ բեր , պահանջեր է հայրս :

«Եղբայրս վերադարձուցեր է թուրը : Հայրս միջակ որդիին յանձներ է զայն : Բայց ան ալ թուրը չէ ձգեր : Այն աստն թուրը յանձնուեր է



Պառ թագաւորը բուրը կը յանձնէ

Վոքը եղբորս , որ նետեր է : Զգած ատեն , ծովը կատողեր է և սկսեր է դէպի երկինք նետել ձուկեր ու կենդանիներ : Հայրս օրհներ է զայն :

Թուրը ծովը ձգած օրը ուրբաթ է եղեր . ուստի մինչև հիմակ ամէն ուրբաթ ծովը կ'որոտայ ու կը կատողի . միւս օրերը հանդարտ է :

«Ահա այս է իմ հօրը պատմութիւնը , ըսաւ Զուարթը . հիմակ կարգը քուկդ է . դ՛ուն ալ պատմէ թէ ո՞վ էս , որ՞ն որդի էս :

— Իմ պատմութիւնը կարճ է , պատասխանեց Արա , ես Արամ թագաւորի որդին եմ , անունս Արա է : Հօրս աչքերը կուրացած են , ըսին թէ միակ դեղը Շամիրամի մօտ կայ , ուստի էս ալ կ'երթամ անոր մօտ այդ տեղը բերելու :

— Շամիրամի մօտ , բացականչեց Զուարթ , վա՛յ ինձ , դու այլևս չես վերադառնար , զայն տեսներով կը մոռնաս զիս ալ , հայրդ ալ :

— Երբեք , պատասխանեց Արա , թող վկայ ըլլան աստուածները , որ նոյնիսկ Շամիրամը չկրնար խլել զիս քեզմէ : Դուն իմ հարսնացուն էս , կ'ըսպասես վերադարձիս :

**Հարցարան.** — Ի՞նչպէս պատմեց Զուարթ . — Անոր հայրը ի՞նչ տեսաւ ծովին քով . — Երկաթը որի՞ տարաւ . — Զինագործը ի՞նչ ըրաւ . — Թուրը ի՞նչպիսի բան մըն էր . — Անով ի՞նչ ըրաւ Պառը թագաւորը . — Շամիրամ ի՞նչ ըրաւ . — Մեռնելու ատեն Պառը թագաւորը ի՞նչ ըսաւ իր որդիներուն . — Արա ի՞նչ խոստում տուաւ Զուարթի :

**Քարոյական քելադուրիւն.** — Արա փոխանակ Զուարթին մօտ մնալու պիտի շտաբորդէ , ծնողասիրութիւնն է զինքը մղողը :

Թ. Դ Ա Ս

ՄԵՐՈՒՆԻ ԿԱԽԱՐԴԸ ԵՒ ԱՐԱ ԳԵՂԵՅԻԿ

Առտուն կանուխ արթնցաւ Արա, պատրաստուեցաւ ճամբայ իյնալու : Զուարթը փորձեց զայն ետ կեցնել, բայց չկրցաւ : Այն ատեն ըսաւ .

— Գոնէ ինձի մտիկ ըրէ և ինչպէս որ ըսեմ այն ըրէ : Երեք օր քալելէն ետք պիտի հասնիս լեռ մը, որուն միւս կողմը Վանի սահմանն է : Երբ լեռը բարձրանաս, մեծ ծառ մը կը տեսնես, անոր կոճղին մօտ սպիտակահեր ծերունի մը նըստած է : Զըլլայ թէ առանց այդ ծերունիին հետ ծանօթանալու անցնիս երթաս : Առաջ բարև տուր : Եթէ չառաւ, երկրորդ անգամ բարև տուր . «Բարի տեսութիւն» ըսէ, ծերո՛ւկ : Տեսար որ դարձեալ չառաւ, երրորդ անգամ բարևէ և «հայր» կոչէ զայն : Եթէ այս անգամ ալ չառաւ, բազուկներդ զօրացուր, նետուէ ծերունիին գիրկը և արմունկները բռնելով՝ որքան որ ոյժ ունիս սեղմէ : Բաջ ես ու քաջ պիտի մնաս : Ծերունին ապշած պիտի խօսի հետդ և պիտի հարցնէ թէ ի՞նչ կը խնդրես . այն ատեն յայտնէ ճամբորդութեանդ նպատակը :

— Շատ լաւ, պատասխանեց Արա, մնասքարով ըսելով ճամբայ ելաւ :

Երեք օր քալելէն ետք, Զուարթի ըսածին նման, լեռ մը հանդիպեցաւ, տեսաւ ծառը և անոր տակ սպիտակահեր ծերունին : Երեք անգամ բարևեց . բարևը չառաւ ծերունին : Այն ատեն նետուեցաւ ու սեղմեց անոր բազուկները : Վերջապէս ծերունին խօսեցաւ .

— Ի՞նչ է խնդիրդ, ըսէ՛, քեզի պէս շատ երիտասարդներ եմ կորսնցուցած, միայն քեզ պիտի ազատեմ և խնդիրդ պիտի կատարեմ :

Արա պատասխանեց .

— Խնդիրս Շամիրամ թագուհիի մօտ հասցընելն է, որպէս զի անոր քովէն բերեմ կուրցած հօրս աչքերուն դեղը :

— Դժուարին բան խնդրեցիր, պատասխանեց ծերունին, թռչունը իւր թեւովը, օձը իւր պորտովը չեն կրցած Շամիրամի երկիրը մտնել, որովհետև ինձ պէս չորս պահապան ունի իր սահմանին վրայ : Բայց ես քեզի խոստացայ չմնասել, դուն ինձի հետ քաղաքավար կերպով վարուեցար, և ես կը ներեմ քեզի որ իմ երեք ընկերները սպաննած ես : Մենք բոլորս ալ կախարդներ ենք և ինչ կերպարանքի մէջ ուղենք կը մտնենք : Անոնք դեւի կերպարանք մտած էին սահմանը լաւ պահպանելու համար : Հիմակ դուն ծառը ելիր և 40 տերև քաղէ, բայց զգուշացիր աւելի քաղելու, յետոյ իջիր և աջ ձեռքիդ մէջ ինձի բեր տերևները :

Արան հնադանդեցաւ, ելաւ ծառը, 40 տերև ժողվեց ու բերաւ ծերունիին: Նա բոլորին վրայ փչեց, աջ ձեռքէն առաւ ձախ ձեռքը, ձախ ձեռքէն՝ աջը, կրկին աջէն՝ ձախը և ապա տուաւ Արային, որ ձախ ծոցը դնէ: Արան կատարեց ծերունիին հրամանը:

— Հիմա, ըսաւ ծերունին, աջ ձեռքդ տար ծոցդ և տերև մը հանէ, միայն չլախնաս, քաջ եղիր, ինչպէս էիր: Մտքէդ չար բաներ չանցնես, սիրելիներդ յիշէ, չխօսիս, այժմ դիր տերեւը շրթունքներուդ մէջ: Արա տերևը դրաւ շրթներուն մէջ և խփոյն սկսաւ աշխարհը անոր աչքին առջեւէն անցնիլ, ահա իր հայրը Արամ՝ կոյր, ահա եղբայրները՝ ուրախ զուարթ, և ահա Զուարթը՝ տրտում տխուր: Արա ուզեց խօսիլ Զուարթի հետ, բայց յիշեց ծերունիին պատուէրը և ինքզինքը զսպեց:

— Ահա կուգայ Շամիրամ թագուհին, ըսաւ ծերունին, կ'ուզես տես, միայն չըլլայ թէ հետը խօսիս: Տեսա՞ր:

— Ահ, տեսայ . . .

— Տեսնելդ բաւական է:

— Ո՛չ, ո՛չ. պիտի երթամ գահի վրայ նըստած տեսնեմ:

— Լաւ, ըսաւ ծերունին, ճամբան հիմա բաց է քու առջև: Գնա՛, մէկ օր երթալէն ետք կը հանդիպիս պահապաններու, որոնք կը տես-

նեն քեզ և կ'աշխատին բռնել: Տերեւ մը հանէ ծոցէդ և շրթունքներովդ բռնէ, անոնք իրար կը խառնուին, քեզ կը փնտռեն, դուն զանոնք կը տեսնես, անոնք քեզ չեն տեսներ: Մինչև վաճահասնելու համար եօթը կարգ պահապաններէ պիտի անցնիս: Ամէն անգամին հին տերեւը նետէ, նորը առ: Երբ կը հասնիս բերդին, կէս գիշերին դրան քով կ'երթաս, տերեւ մը դրան ճեղքը կը քսես, դուռը կը բացուի, պահապանները քեզ չեն տեսներ: Վեր կ'ելնես, Շամիրամի պալատին ընդարձակ սրահներէն կ'անցնիս, կը մտնես ննջարանը: Շամիրամի պառկած տեղը, ոտներուն ու սնարին մօտ մէյ մէկ թանկագին քարի ջահեր վառուած են, իւրաքանչիւր քար էրեն յատուկ լոյսն ունի: Բոլորը դիւթիչ տպաւորութիւն մը կը թողուն: Մի՛ մօտենար անկողնին, ուղղակի գնա՛ սնարի մօտ, տերեւով մը բաց այն տեղի արկղը, որ լի է թանկագին քարերով ու զարդերով: Զեռք մի՛ դպցնել որ մէկուն: Աջ կողմի դարակին մէջ է հօրդ աչքերուն դեղը, վերցո՛ւր զայն: Այնուհետև քու խոհեմութենէն է կախուած առանց ասդին անդին նայելու մեկնիլ, ոչ մէկ նշան թողուլ անոր մօտ: Այս է ըսելիքս: Գնա՛:

Հարցաւսն — Զուարթ ի՞նչ խորհուրդ տուաւ. — Ծերունին բարեւն առա՞ւ. — Արա ի՞նչ ըրաւ. — Ծերունին ի՞նչ խօսեցաւ. — Տերեւները ի՞նչ ըրաւ ծերունին, — Արա ի՞նչ տեսաւ. — Ծերունի ի՞նչ նպատուիրեց:

Բարոյական քեղադուրիւն . — Քաղաքավարու թիւնը հե-  
րոսի առաքինութիւններէն մէկը կը ներկայացուի այս հատուածին  
մէջ . կ'արժէ անդրադառնալ ի մէջ այլոց նաև անոր :

Ժ. Դ Ա Ս

Ա Ր Ա Ե Ի Շ Ա Մ Ի Ր Ա Մ

Արա համբուրեց ծերունիին ձեռքը և ճամ-  
բայ ինկաւ :

Անոր պատուէրները ամբողջովին կատարելով,  
Արա անցաւ բազմաթիւ պահապաններու մէջէն,  
մտաւ Շամիրամի ննջարանը, բացաւ թանկագին  
քարերու արկղը, հանեց իր հօրը աչքերուն դե-  
ղը, գոցեց սնտուկը և կ'ուղէր ետ դառնալ :

Աչքը հանդիպեցաւ Շամիրամի, որ անփոյթ  
կերպով ինկած էր անկողնին մէջ :

Անոր ոսկեթել մաղերը գանգուրներ կազմած  
էին կամար ունքերուն, լայն ճակատին վրայ, և  
առատութեամբ թափած էին անոր ուսերուն վրայ :  
Աչքերը խոշոր էին, այտերը կարմիր մէյ մէկ խըն-  
ձոր, բերանը փոքր, շրթունքը՝ վարդի թեր,  
կարծես Աստուած ոսկի գրին առեր նախշեր էր  
զայն, այնպէս որ զայն դիտողը կը մոռնար իր  
հացն ու ջուրը :

Արան մոռցաւ ծերուկի պատուէրը, ծռեցաւ

և համբոյր մը դրաւ անոր երեսին, ու շտապով  
հեռացաւ ննջարանէն : Շամիրամի մօտ մնաց նաև  
իր մատանին :

Հազիւ արշալոյսը բացուեր էր, երբ Շամի-  
րամ թագուհին սովորականէն կանուխ արթնցաւ :  
Կէս քուն, կէս արթուն, նա մտատանջութեան  
մէջ ինկաւ . իրեն կը թուէր թէ մէկը մօտեցած է  
երեսն, արարածի մը շունչը գգուած է իրեն երե-  
սը, շրթունք մը դպած է իրեն այտին :

Իսկոյն ելաւ անկողնինէն . կանչեց իր քառա-  
սուն նաժիշտները . բարկացաւ անոնց և ըսաւ .

— Ո՞վ է մտեր այս գիշեր իմ սենեակը :

Բոլորը իրարու երես նայեցան և ապշած  
մնացին :

Թագուհին տեսնելով անոնց ապշիւր, հրա-  
մայեց ջուր բերել որ լուացուի : Անմիջապէս ա-  
կանակուռ սափորով ջուր բերին և Շամիրամ  
սկսաւ լուացուիլ :

Երբ կը լուացուէր յանկարծ աչքի զարկաւ  
Արա Գեղեցիկի մատանին, որուն վրայ գրուած  
էր . « Արա Գեղեցիկ որդի Արամ թագաւորի » :

Իսկոյն արիւնը գլուխը ցատկեց և ան գոչեց .

— Ուրեմն նա՛ էր որ տեսայ . այն ի՞նչ  
թռչուն էր, որ ձեռքէս փախցուցի :

Ապա խիստ հրաման արձակեց, որ բոլոր  
չօրքը պատրաստուի Արամ թագաւորի վրայ պա-  
տերազմի երթալու :

Հարցարան. — Արա ի՞նչ ըրաւ ննջարանին մէջ. — Շամիրամը ի՞նչպէս դէմք մը ունէր. — Արա ի՞նչ թողուց հոն. — Առաւօտ ի՞նչպէս իմացաւ Շամիրամ. — Ի՞նչ հրամայեց իր զօրքերուն :

Քառոյական քելադուրիւն. — Արա անխոհեմութիւնը կ'ունենայ ծերունիին պատուէրին անաստելու , ստոր համար կը գիտցուի իր գաղտնիքը :

Ժ Ա. Դ Ա Ս

Ա Ր Ա Յ Ի Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

Արա , Շամիրամի ննջարանէն մեկնելէն ետքը՝ շուտով գնաց , հասաւ ծառին տակ նստած ծերունիին մօտ :

Սա բարկացաւ Արային և ըսաւ .

— Դուն չկատարեցիր իմ պատուէրը , դունքու ձեռքովդ նշան ձգեցիր : Ատով ոչ միայնքեղ , այլև զիս վտանգի ենթարկեցիր : Շամիրամի զօրքերը երկու օրէն հոս կը հասնին . փախիր որ աղատուիս . ես ալ այս լեռներուն մէջ կը պահուիմ :

Արա Գեղեցիկ մէկ ոտքը երկուք ըրաւ , գիշեր ցորեկ քալելով գնաց հեռացաւ :

Առտուան արեւը ծագած ժամանակ հասաւ , մօտեցաւ Զուարթի բերդին : Զուարթ տեսաւ որ

իր սիրելին կը վերադառնայ , դէմ վազեց , գրկեց և համբուրեց զայն : Եկան տուն :

Հազիւ քիչ մը հանգստացեր էին , Արա ոտքի ելաւ ըսելով .

— Այս ուրախութիւնը ուրախութիւն չէ , պէտք է շուտով մեկնինք այս տեղէն , հաց ուտելու ալ ժամանակ չկայ :

Զուարթ ուրախացաւ որ զինքն ալ հետ պիտի տանի , և աճապարելուն պատճառն անգամ Հարցուց : Արևը մարը չմտած ճամբայ ինկան :

Գիշեր ցորեկ ճամբայ կտրելով հասան նախ միջակ և ապա աւագ եղբօր բերդը , և զանոնք ալ իրենց հետ առնելով շարունակեցին ճամբան :

Վերջապէս երկար քալելով հասան իրենց քաղաքը : Արամ թագաւորը ախուր նստած էր , երբ ներս մտաւ Արա :

Արա Գեղեցիկ վազեց գրկեց իր հայրը և բացականչեց .

— Աչքիդ դեղը բերած եմ , թող որ բժշկեմ :

Անմիջապէս դեղը քսեց աչքերուն : Վայրկենաբար աչքերը բացուեցան , երիտասարդացաւ և աշխոյժ եկաւ վրան :

Ուրախացան ամէնքն ալ : Ամբողջ երկու երեք գիշեր ուրախութեամբ անցուցին : Երբ առտու մը լուսցաւ , դուրս նայեցան և տեսան , որ չրջակայ լեռները զօրքերով լեցուած են : Շամիրամ թագուհին եկեր պաշարեր էր իրենց քաղաքը :

Հայր և որդի սկսան խորհել իրենց ընելիքին վրայ :

— Ա՛ռ դարձեալ թուրս, ըսաւ հայրը, անցիր զօրքերուս գլուխը և գնա վանէ զանոնք մեր ազաա լեռներէն :



Ախլաք

Արա գեղեցիկ անմիջապէս իր զինուորները կանչեց, կարգի դրաւ և յայտնեց որ կամ կը մեռնին և կամ Շամիրամը կը քշեն :

Այն օրը ամբողջ պատրաստութիւններ տեսան և իրիկուան դէմ յանկարծ յարձակեցան Շամիրամ թագուհիի զինուորներուն վրայ : Արա Գեղեցիկ ջարդելով թշնամիները քշեց շատ հեռու, օրերով հալածեց մինչև Վանի սահմանները :

Ախլաթի մէջ Շամիրամ նոր զինուորներ ալ ժողուելով նորէն ետ դարձաւ և հրամայեց Հայոց ամբողջ բանակը սրէ անցնել, և ըսաւ .

— Միայն չսպաննէք զօրքին գլխաւորը, որ երկար մազերով, բարձրահասակ և աննման երիտասարդ մըն է, այլ ողջ ողջ իմ մօտ բերէք :

Պատերազմը սկսաւ : Աչքերը արիւն լեցուած կը կռուէին, առանց նկատելու թէ ո՞վ է ապրողը, ո՞վ է մեռնողը :

Այս իրարանցման մէջ ինկաւ Արա Գեղեցիկ : Անոր զօրքը կատաղութեամբ սկսաւ արձան վրէժը լուծել, բայց շուտով յուսահատելով թողուց պատերազմը :

Պատերազմի դաշտը անթիւ գիակներով լեցուած էր : Շամիրամ անհամբեր կ'սպասէր որ իր զօրականները ուր է ուր չէ Արա Գեղեցիկը կը բերեն իրեն, բայց անոր յոյսը պարապը ելաւ : Ոչ ոք կրցաւ տեղեկութիւն մը տալ Արայի մասին :

Ուստի ինքը անձամբ ուղեց պտտիլ պատերազմի դաշտը և իմանալ թէ Արան մեռած է թէ փախած է վատաբար :

Անցաւ հազարաւոր գիակներու մէջէն, թուաւ արիւնի վտակներու վրայէն, կանգնեցաւ հսկայ գիակի մը առջև, նայեցաւ և հառաչելով հրամայեց որ պալատ տանին :

Իսկոյն կատարեցին անոր հրամանը :

Շամիրամ երեք օր շարունակ նստած Արա  
Գեղեցիկի դիակին մօտ , կը գրկէր զայն և կ'ող-  
բար : Երեք օրէն ետքը աչքերը ծով կտրած հրա-  
մայեց որ վերցնեն և տանին թաղեն :

Եւ վերցուցին , մեծ պատիւով թաղեցին Արա  
Գեղեցիկը :

Հարցարան. — Ծերունին ի՞նչ ըստ Արայի. — Արա ի՞նչ  
խօսեցաւ Զուարթին. — Հայրը ի՞նչպէս աղեկցուց. — Շամիրամ  
ի՞նչ ըրաւ. — Արա ի՞նչ պատուիրեց իր զինուորներուն. — Ո՞ւր  
եղաւ մեծ պատերազմը. — Շամիրամ ի՞նչ ըսաւ իր զինուորնե-  
րուն. — Շամիրամ ի՞նչ ըրաւ Արայի դեակին վրայ :

Բարոյական թելադրութիւն. — Պէտք է անդրադառնալ  
ամբողջ աւանդավէպի ոգիին, ցոյց տալով Արայի ճնողասիրու-  
թիւնը, անձնուիրութիւնը և այլն :

ԺԲ. Դ Ա Ս

Զ Ա Ր Մ Ա Յ Ր

Սիրելի աշակերտներս ,

Զեզի այսօր պիտի պատմեմ սիրուն և նշա-  
նաւոր պատմութիւն մը :

Դիտէ՞ք Յոյները մեզի նման ազգ մըն են :  
Անոնց պապերը շատ քաջ, խելացի մարդեր էին ,  
անոնք կը կոչուէին Հելլեններ :

Հելլենները կ'ապրէին ծովեզերեայ երկիր մը

և կըզինէրու մէջ : Հին Հայերուն պէս շատ մը  
աստուածներ կը պաշտէին :

Հին Յոյները թագաւոր մը ունէին , որուն  
կինը Հելլեն կը կոչուէր . նա շատ գեղեցիկ էր :

Պոլիսի մօտերը , Տարտանէլի քով երկիր մը  
կար , որուն թագաւորը Պարիս անունով տղայ մը  
ունէր : Պարիս անգամ մը Յոյներու թագաւորին  
հիւր կ'երթայ և տեսնելով Հելլենի գեղեցկութիւնը  
զայն կը համոզէ և իրեն հետ կը փախցնէ :

Այս բանը իմանալով բոլոր Հելլենները կը  
բարկանան և պատերազմ կը հրատարակեն Պա-  
րիսի դէմ :

Իրենց նաւերը և զինուորները կը պատրաս-  
տեն . կը յարձակին Պարիսի հօրը քաղաքին վրայ :  
Տասը տարի կը տևէ այդ պատերազմը , որովհե-  
տե Պարիսի հայրը , եղբայրը և ուրիշ շատ քաջեր  
կը դիմադրեն :


Այդ քաջերուն մէջ Հայոց քաջ նահապետն  
ալ կը գտնուէր : Զարմայրն էր ան :

Զարմայր , որովհետեւ բարեկամ էր Պարիսի  
հօրը հետ , երբոր լսեց թէ Հելլենները յարձակած  
են անոր վրայ , և ան ալ իրեն օգնութեանը կը  
կարօտի , պատրաստուեցաւ երթալ օգնելու : Կար-  
գի դրաւ իր զինուորները և գնաց :

Հայերուն քաջ նահապետը հասնելով իր բա-  
րեկամին քով , սկսաւ իր զինուորներով կոտորել

անոր թշնամիները : Հելլենները Չարմայրը և անոր քաջերը տեսնելով կը փախչէին :

Հելլեններուն մէջ քաջ իշխան մը կար . անոր անունն էր Աքիլէս : Անոր ոյժն ու քաջութիւնը սարսափելի էր : Կ'ըսէին թէ աստուածները անոր



Չարմայր կ'սպաննուի Աքիլէսէն

օգնականն էին պատերազմի մէջ, թշնամիին նետերը չէին մտներ անոր մարմինէն ներս :

Աքիլէս երբ լսեց Չարմայրի անունը սկսաւ մտածել, ան թէպէտ միտքը դրեր էր ալ չպատերազմիլ, որովհետև Հելլեններու թագաւորը բարկացուցեր էր զինքը, բայց երբ շատ աղաչեցին, գնաց կռուելու Չարմայրի դէմ :

Չարմայր երբ Աքիլէսը տեսաւ քաջեց իր աղէզը, նետեց իր նետը, որ գնաց զարնուեցաւ Աքիլէսի կուրծքին :

Բայց Աքիլէսի կուրծքը ծածկած զրահը թողչտուաւ . նետը զարնուեցաւ և գետին ինկաւ, առանց վնասելու :

Աքիլէս կառքը դարձուց Չարմայրի վրայ և նետով մը տապալեց քաջը : Չարմայրի մահը մեծ ցաւ պատճառեց բոլոր Հայերուն և Պարսի հօրը, որ մեծ փառքով թաղել տուաւ զայն : Չարմայրի մահէն ետք ուրիշ քաջեր ալ մեռան և Հելլենները զրաւեցին քաղաքը :

**Հարցարան .** — Հին Յոյները ի՞նչ կը կոչուէին . — Ի՞նչ էր անոնց թագաւորի կոչումը . — Ո՞րք էր Պարսի, ի՞նչ ըրաւ . — Չարմայրը ինչ՞ու օգնեց Պարսի հօրը . — Չարմայր ո՞ւրից սպաննուեցաւ :

**Բարոյական քննադատութիւն .** — Աշակերտներու մտքն ընդունակութիւնը եթէ թոյլատրէ ուսուցիչը կրնայ քիչ մ'աւելել մանրամասն նկարագրել Տրոյապատերազմին պատերազմին դէպքերն ու դէմքերը, Պէտք է շեշտել մասնաւորաբար հիւրասիրութեան դէմ Պարսի գործած անարգանքը, որ ոտք հանած է ամբողջ ցեղ մը :

### ԺԳ. ԴԱՍ

#### Վ Ա Հ Է Ե Ի Ա Ղ Է Ք Ս Ա Ն Դ Բ

Զարմայրի նման ուրիշ քաջ իշխան մըն ալ ունեցած ենք : Անոր անունն էր Վահէ :

Վահէ Զարմայրի պէս Յոյներու մէկ քաջին հետ կուռած է : Հելլէններուն մտտիկ ազգ մը կար, որ հին յունարէնին նման լեզու մը կը խօսէր : Այդ ազգը կը բնակէր Հելլէններուն երկիրին մօ-




Մեծն Աղեքսանդր

տերը ընդարձակ երկրի մը մէջ : Անոնց թագաւորն էր Աղեքսանդր :

Աղեքսանդր շատ մեծ գործեր ըրած ըլլալուն համար կը կոչուի Մեծն Աղեքսանդր : Ան իր հօրը երկիրը ընդարձակեց, Հելլէնները իրեն հնազանդեցուց և ուղեց բոլոր աշխարհքին տէրն ըլլալ :

Իր բանակը կարգի գրաւ և Տարտանէլէն անցաւ : Իր առջևը ելած բոլոր երկիրները գրաւեց : Երուսաղէմը իրեն հնազանդեցուց : Ուղեց նաև Պարսիկներն ու Հայերն ալ իրեն առջև խոնարհեցնել :

Մեծ բանակով գնաց Պարսիկներուն վրայ : Պարսիկները երբ իմացան Մեծն Աղեքսանդրի գա-



Իսուսի պատերազմին սեղը

լը սկսան պատրաստուիլ : Պարսից թագաւորը կազմեց իր զինուորները :


Նա վախցաւ Աղեքսանդրի ոյժէն . ուստի Հայոց Վահէ իշխանէն օգնութիւն ուղեց : Վահէ, որովհետև անոր բարեկամն էր, անոր օգնելու գընաց՝ իր զինուորներով :

Երկու մեծ բանակները Իսուսի դաշտ ըսուած

տեղը հաւաքուեցան : Հայոց քաջերն ալ հոն գացին :

Պատերազմը սոսկալի կերպով սկսաւ : Մեծն Աղեքսանդրի զօրքերը յարձակեցան Պարսիկներուն վրայ և սկսան շարժել :

Հայ քաջերը միշտ կը դիմադրէին : Բայց Պարսիկները չդիմանալով փախան : Այն ատեն վա-



Աղեքսանդր ձի հեծած կը կռուի

հէ իր զինուորները առաւ և գնաց Հայաստան : Աղեքսանդր ուզեց հնազանդեցնել Վահէն, ատոր համար քալեց անոր վրայ :

Վահէ իր երկիրը պաշտպանելու համար դէմ ելաւ Աղեքսանդրին և քաջբար կռուեցաւ :

Սակայն կռուի միջոցին Մեծն Աղեքսանդր նե-տը քալեց և սպաննեց Վահէն :

Անկէ ետքը Հայաստանը Աղեքսանդրի իշխա-նութեան տակ ինկաւ , Պարսկաստանի հետ մէկ-տեղ : Աղեքսանդր Հայերուն վրայ Միհրան անու-նով կառավարիչ մը դրաւ :

**Հարցարան.** — Մեծն Աղեքսանդր որո՞ւ թագաւոր էր. — Ի՞նչ կ'ուզէր ըլլալ. — Ի՞նչ գրաւեց. — Մեծ կռիւը ո՞ր տեղ եղաւ. — Պարսիկները ի՞նչ եղան. — Վահէ որո՞ւ օգնութեան զացեր էր. — Ի՞նչ ըրաւ. — Ի՞նչպէս և որմէ՞ սպաննուեցաւ. — Աղեքսանդր ի՞նչ մը դրաւ Հայերուն վրայ :

**Քարոյական քելագրութիւն.** — Մեծն Աղեքսանդրի հայ-րենիքին, տարիքին, և այլնի մասին կարելի է քիչ մը աւելի ծան-ջանալ, նայելով մանուկներու մտային պաշարն ու ընդունակու-թիւնը, կարելի է նաև շեշտել թէ կռիւներ կան ուր յաղթուիլն ու մեռնիլը արժէք մը չունին. ինքնապաշտպանութեան ատեն մեռնիլը հերոսութիւն է :


## ԺԴ. Դ Ա Ս

### ՎԱՂԱՐՇԱԿ ԵՒ ՄԱՐ ԱՐԱՍ

Դուք լաւ գիտէք որ Հայերուն նշանաւոր թագաւորներէն մէկը եղած է Վաղարշակ : Ան Պարթեւներու թագաւոր Արշակին եղբայրն էր :

Հայերը շատ սիրեցին Վաղարշակը, որովհետև խաղաղութեամբ և խելացութեամբ կառավարեց երկիրը . գեղեցիկ օրէնքներ դրաւ :

Անիկա ուզեց իմանալ թէ իրմէն առաջ որո՞նք տիրած են Հայաստանի, արդեօք քաջ մարդեր եղած են անոնք թէ վախկոտ ու տկար: Բայց Հայերուն մէջէն մէկը չգտնուեցաւ որ ճշմարիտ բան մը պատմէր Հին Հայաստանին վրայ:



Մար Աբաս Վաղարշակի առջեւ

Այն ժամանակ Վաղարշակ իր մօտ կանչեց ասորի գիտնական մը, որուն անունն էր Մար Աբաս Կատինայ, որ շատ աղէկ գիտէր յունարէն և ուրիշ հին լեզուներ: Չայն իր եղբօրը քով զրկեց մեծամեծ ընծաներով, և սա նամակը գրեց անոր .

«Երկրի և ծովերու թագաւոր Արշակին բա-  
րեւ:

«Ես քեզմէ պատուէր ստացայ որ հոգ տա-  
նիմ քաջութեան և իմաստութեան գործերու: Բնաւ մտքէս հանած չեմ քու այդ խրատը, այլ ամէն ջանք ի գործ դրի և ըրի որքան որ կրնայի: Այժմ կարգի բերելով այս թագաւորութիւնը, միտքս դրի իմանալ թէ որո՞նք տիրած են Հայոց աշխարհին ինձմէ առաջ, ո՞ր տեղէն են այս նա-  
խարարութիւնները, որ կան այստեղ:

«Ուստի կ'աղաչեմ քու տէրութեանդ, որ հրամայես բանալ թագաւորական դիւանդ (գիր-  
քերու տեղ) այս իմ զրկած մարդուն առջև, որ գտնէ քու եղբօրդ և որդիիդ փափաքածը, և բերէ շուտով այստեղ:

«Ողջ եղիր դուն, որ աստուածներուն մէջ  
կը բնակիս»:

Արշակ երբոր Մար Աբասէն ստացաւ այս նա-  
մակը, ուրախութեամբ հրամայեց բանալ անոր առջև արքունի դիւանը, ուր պահուած էին հին թագաւորներու գործերուն վրայ գրուած գիր-  
քերը, և շատ գոհ էր որ իր եղբայրը այդպէս խելացի մէկն է:

Բոլոր գիրքերը մի առ մի քննելով Մար Աբաս Կատինայ գտաւ յունարէն գիրք մը, որ Մեծն Աղեքսանդրի հրամանով գրուած էր: Այդ գրքին մէջ գրուած էին նախնի նահապետ-

ներու, իշխաններու և թագաւորներու պատմութիւնները :

Գիտնական Ասորին այս մեծ գիրքէն ընդօրինակեց մի միայն այն մասը, որ մեր ազգին կը վերաբերէր, ու բերաւ Վաղարշակ թագաւորին :

Վաղարշակ այդ գիրքը իր բոլոր գանձերուն առաջինը կը սեպէր և պատուիրեց մեծ զգուշութեամբ պահել պալատին մէջ: Մէկ մասն ալ արձանի վրայ փորագրել տուաւ և կանգնեց քաղաքին մէջ, որ ամէնքը տեսնան և իմանան թէ ի՞նչ պատահած են Հայաստանի մէջ :

Հարցարան. — Վաղարշակ ի՞նչ կը փնտռէր. — Մար Աբասը մըր ղրկեց. — Ի՞նչ նամակ գրեց իր եղբորը. — Մար Աբաս գիրք գտա՞ւ. — Ի՞նչ բրաւ. — Վաղարշակ ուրախացա՞ւ. — Ի՞նչ ընեւ տուաւ :

Բարոյական քննադրութիւն. — Կարկառուն կերպով շեշտել մեր նախնիքներուն կեանքին ու գործերուն ծանօթանալու անհրաժեշտութիւնը :

**ԺԵ. Դ Ա Ս**

**Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Կ Ե Ի Մ Ո Ր Փ Ի Ի Ղ Ի Կ Է Ս**

Վաղարշակ Հայոց Պատմութիւնը գտնելէն ետքը սկսաւ Հայաստանը շէնցնել :

Բայց յանկարծ թշնամի մը յարձակեցաւ Հայաստան: Այդ թշնամին կը կոչուէր Մորփիւղիկէս:

Մորփիւղիկէս Հայաստանի արեւմտեան կողմը գտնուած Կապադովկիա երկրին իշխանն էր: Ան իրեն հետ միաբանեցուց ուրիշ շատ մը իշխաններ և ամէնքը մէկէն արշաւեցին Վաղարշակի վրայ:

Վաղարշակ առաւ իր զինուորները և թշնամիներուն դէմը ելաւ: Երկու կողմի զօրքերը բռնի մը մօտ իրարու դէմ նստան ու սպասեցին:

Քանի մը օր ետքը պատերազմը սկսաւ: Առաջին անգամ պատերազմի սկսողը եղաւ Վաղարշակ. ուստի Մորփիւղիկէսն ալ ստիպուեցաւ կռուի ձեռնարկել:


Մորփիւղիկէս սրտոտ, կտրիճ փարդ մըն էր. քարձր հասակով, խոշոր ու վայելչագէմ և չափազանց ուժով էր: Պղինձէ ու երկաթէ զրահներ հագած էր:

Յարձակեցաւ ան ու մէկ քանի քաջ ու նշանաւոր զինուորներ սպաննեց Վաղարշակի բանակէն: Կ'աշխատէր կտրել անցնիլ ու հասնիլ Հայոց թագաւոր Վաղարշակին, որ մեծ և գէնքերով պաշտպանուած խումբի մը մէջ կը գտնուէր:

Մօտեցաւ ան և յաջողեցաւ նիզակը քաշել Վաղարշակի վրայ: Եւ որովհետեւ կորովի էր ան ու հեռուն կրնար նետել իր նիզակը, քիչ մնաց որ Հայոց թագաւորը սպաննէր:

Բայց բան մը չկրցաւ ընել, որովհետեւ Հայկի

սերունդէն և Սենեքերիմի որդիներէն մէկ քանի  
քաջեր, առաջ անյնիւով, յարձակեցան անոր վրայ  
և նիզակով ծակեցին անոր կուրծքը, գետին փռե-  
ցին զայն :



Հայերը կ'սպանցեն Մորփիւղիկեսը

Ապա անոր բոլոր զինուորները փախուստ  
դարձուցին : Շատերը սպաննեցին և անոնց արիւ-  
նով անձրեւի հեղեղի պէս երկիրը թրջեցին :

Սնկէ ետքը Հայոց երկիրը խաղաղեցաւ և  
չունեցաւ թշնամիներ : Վաղարշակ կառավարեց  
զայն :

Հարցարան.—Ո՞վ յարձակեցաւ վաղարշակի վրայ.— Հայոց  
Թագաւորն ի՞նչ ըրաւ.— Մորփիւղիկէս ի՞նչպէս մարդ էր.— Կռուի  
ատեն ի՞նչ ըրաւ.— Ի՞նչ կերպով սպանուեցաւ :

Բարոյական քիչադուրիւն.— Պէտք է հասկցնել սանե-  
րուն թէ Հայերը ընդհանրապէս եղած են յիշատիւր. Թագաւորն  
կեանքը Թանկագին եղած է իրենց համար, անոր հրամանը ան-  
պայման գործադրելի :

ԺԶ. Դ Ա Ս

Տ Ո Ր Ք Ա Ն Գ Ե Ղ

Վաղարշակ Թագաւորի ժամանակ Տորք Ան-  
գեղ անունով մարդ մը կար: Հասարակ մարդու  
նման չէր ան, այլ աժտահա, ահարկու հսկայ մը:  
Աչքերը խոր ու դժնեայ, սեւ սեւ ունքերը՝ մութ  
ամպի նման՝ կախուած էին աչքերուն վրայ. քի-  
թը կորնթարթ ու տափակ, ակռաները ուրագի  
նման, եղունգները թուր, բաղուկները գերաննե-  
րու պէս, կուրծքը լայն:

Կոշտ ու կոպիտ կերպարանք մը ունէր ան,  
բարձրահասակ ու տգեղ: Սնոր դէմքը այնքան  
դաժան ու անճոռնի էր որ վրան նայելու կը սոս-  
կային մարդիկ:

Հայկի սերունդէն էր ան, Հայկի մէկ թուռան՝  
Պասքամի սերունդէն:  
Այս Տորքի մասին զարմանալի բաներ կը պատ-

մէին մեր հին երգիչները: Ես ալ ձեզի պիտի պատմեմ անոնց ըսածները:

Տորքը դեռ պատանի էր երբ ժայռեր կը կտորատէր, ձեռքով կը ճեղքէր զանոնք ու եղունգներով կը մաքրէր, տախտակներ կը շինէր և անոնց վրայ պատկերներ կը փորագրէր:

Նա շատակեր չէր Շարայի նման, կը սիրէր կաթը, թանն ու մածունը: Բարկացոտ չէր, այլ հեղ էր և խոնարհ, բայց եթէ բարկանար, Տէրը ազատէ՛ր անոր ձեռքէն:

Անգամ մը գիւղին մէջ Տորքը զայրացուցին, ետեւէն գոչեցին.

— Անգե՛ղ, գէ՛շ անգեղ:

Ալ չհամբերեց. ծառ մը փրցուց և անով աւելց ամբողջ գիւղը, տուները քանդեց: Մարդերը փախան ճանճերու պէս, ո՞վ կրնար Տորքին դէմ ելլել:

Այսպէս երբ անոր բնութիւնը հասկցան, ա՛լ այնուհետեւ սրտին չբպան: Մեծ յարգանքով պատուեցին, պարերգ շինելով գովաբանեցին: Աղջիկներ ու տղաքներ՝ ձեռք ձեռքի բռնած՝ կը պարէին ու Տորքը կը գովէին:

Անգութ չէր Տորքը և ոչ ալ տգէտ էր: Լաւ որմնադիր էր և ճարտարապետ: Ահագին քարեր բերաւ լեռնէն ու տաշեց տաշտեց, իր քանդած գիւղին տուները նորէն շինեց:

Անկէ ետքը Տորք իր ոյժը բարիքի համար կը գործածէր: Իրմէն առաջ գողերն ու աւաղակները աներկիւղ կը թալանէին գիւղերն ու քանքները, բայց երբ Տորք Անգեղը մէջտեղ ելաւ, բոլորը ծակուծուկ մտան:

Նա ոչ թուր կը գործածէր և ոչ նետ, միայն իր երեւնալովը կը փախցնէր չարագործներն ու թշնամիները: Բայց երբ թշնամին երես առած կը մնար, այն ատեն ոյժի կը դիմէր. կը վերցնէր ահագին քարեր և կարկուտի պէս գլխնուն կը թափէր:

Սեւ ծովի կողմէն օտար թշնամիներ կը թալանէին և մարդերը գերի կը տանէին: Միշտ կուգային նաւերով, կը կողոպտէին գիւղերը և գերի կը տանէին սիրուն աղջիկներ:

Անգամ մը եկան խնդրեցին Տորքին, որ երթայ օգնէ խեղճ ժողովուրդին: Գնաց մեր հսկան, բայց նաւերը արդէն հեռացեր էին Սեւ ծովի ափէն:

Չայրացաւ Տորք, գոռաց, մոնչեց: Սարերէն բլրաշափ ժայռեր փրցուց, փախչող նաւերու ետեւէն նետեց:

Դղրդեցաւ ծովը, բարձրացան ալիքները: Ահա դարձեալ ժայռ, դարձեալ դղրդոց: Նաւերը օրօրօցի պէս կը տատանէին: Բլուր մըն ալ, առաջիւնէն աւելի մեծ, ուղղակի կ'իյնայ նաւերուն դը-

խուն : նաւերը կը զարնուին ու աւազակներուն հետ ծովին յատակը կ'երթան :

Աւազակներէն միայն մէկը ազատուեցաւ, գըլուխը պատռտած իր երկիրը հասաւ, և այնտեղ այնպիսի հրաշքներ պատմեց որ լսողները սարսափեցուց :

Ահա այն բարբարոսութեան վերջ տուաւ մեր զօրեղ հսկան :

**Հարցարան.** — Տորք Անգեղ ի՞նչպէս մտոր էր. — Ի՞նչպիսի աչքեր ունէր. — Քիթը, բազուկները, հասակը ի՞նչպէս էին. — Անգամ մը երբ բարկացաւ ի՞նչ ըրաւ գիւղը. — Բարի՞ էր թէ չար. — Սեւ ծովի եզերքը ի՞նչ կ'ընէին աւազակները. — Տորքը ի՞նչ ըրաւ :

**Բարոյական քննադատութիւն.** — Ֆիզիքական տգեղութեան տակ սրտի ազնուութիւն, նկարագրի գեղեցկութիւն մը ունի Տորքը, պէտք է շեշտել այս պարագան :

**ԺԷ. Դ Ա Ս**

**ՏՈՐՔ ԱՆԳԵՂ ԵՒ ՎԱՂԱՐՇԱԿ**

Տորքի անունը շատ հռչակուեցաւ, մինչեւ Վաղարշակ թագաւորին ականջը հասաւ :

Վաղարշակ իր մօտ կանչեց Տորքը որ տեսնէ զայն և պարգեւներ տայ անոր :

Տորք գնաց Հայոց թագաւորին մօտ : Ան ու-

սը առած էր մեծկակ ծառ մը, ծառին ճիւղերէն կախած էր երէներ. անոնց մէջ կար այժեամբ ու վայրի ոչխար, եղնիկ, եղջերու :

Երբ քաղաք մտաւ ան, շարժուն աշտարակ մը կարծեցին զայն : Ան գնաց թագաւորին առջեւ :

Վաղարշակ շատ գոհ մնաց ու գովեց զայն :

Տորք օր մը բլրաշափ ժայռ մը առնելով, սկսաւ տաշել փորել փորփորել իր սուր եղունգներով. թագաւորին պէս արձան մը շինեց : Եւ ի՞նչքան նման, ո՞րքան գեղեցիկ :

Թագաւորը ծիրանի հագած, բոլոր զարդերով զարդարուած, գահի վրայ բազմած, թագը գլուխը դրած, գաւազանը ձեռքը փառաւոր մօրուքով :

Երբ թագաւորը տեսաւ, հիացաւ մնաց : Շատ պատիւներ տուաւ անոր :

Տորքը անկէ ետք միշտ թագաւորին քովն էր և անոր պահապանը : Պատերազմներու մէջ միշտ յաղթող էր ան :

Մորփիւղիկէսի հետ կուռած ժամանակ Տորքը Վաղարշակի զինուորներուն առաջնորդն էր :

Անոր նետած քարերը շատ զօրք սպաննեցին և վերջապէս փախցուցին Մորփիւղիկէսի զինուորները :

Իր այս քաջութեանը համար, Վաղարշակ Տորքը կուսակալ կարգեց իր աշխարհի արևմտեան մասին վրայ :

Անոր տուաւ պէս պէս ընծաներ, մանեակ, գինդ (օղ), ապարանջան, պատուական քարերով մատանի, սամոյրէ խոշոր մուշտակ մը, հարիւր քսակ մըն ալ ոսկի և արծաթ :

Տորքը երկար տարիներ խաղաղ կերպով կառավարեց իր իշխանութեան յանձնուած գաւառը :

Ո՛չ ոք կը համարձակէր անոր գաւառին մէջ չարութիւն ընել, գողութիւն կամ աւազակութիւն ընել. ամէնքն ալ կը վախնային Տորքէն և կը սիրէին, կը յարգէին զայն :

**Հարցարան.** — Վաղարշակ երբ րեց Տորքի համբաւը ի՞նչ ըրաւ. — Տորք ի՞նչ նուէր տարաւ թագաւորին. — Տորք ի՞նչ շինեց անգամ մը. — Մորփիւղիկէսի պատերազմին ատեն Տորք ի՞նչ ըրաւ. — Վաղարշակ անոր ի՞նչ պաշտօն տուաւ :

**Ռարոյական քելարուքիւն.** — Դրուտտել Տորքի մտացիութիւնն ու արուեստագիտութիւնը հակառակ անոր դէմքի տգեղութեան ու կոպտութեան: Այս դասին մէջ կ'արժէ տղաներուն ըմբռնելի դարձնել, այծեալ, եղնիկ, զինդ, ապարանջան և այլն բառերը :

Ժ Ը . Դ Ա Ս

ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ՍԱՆԱՏՐՈՒԿ

Վաղարշակէն ետքը շատ թագաւորներ նըստեցան Հայաստանի մէջ. անոնք ամէնքն ալ վա-

ղարշակի սերունդէն էին և կը կոչուէին Արշակունի :

Հայաստանի մէջ կար նաև իշխաններու նշանաւոր գերդաստան մը, որ կը կոչուէր Բագրատունի : Բագրատունի նախարարները կամ իշխանները միշտ հաւատարիմ կերպով կը ծառայէին Արշակունի թագաւորներուն :

Բագրատունիները կը մեծցնէին և կը կըրթէին թագաւորական տղաները և յետոյ անոնց մեծը թագաւոր կը պսակէին՝ անոնց հօրը մահէն ետքը :

Շատ մեծ ու նշանաւոր մարդեր ելան Բագրատունիներու մէջէն. անոնք փառաւորուեցան ոչ միայն հայրենի աշխարհին մէջ, այլ և Հայաստանէն դուրս :

Անոնց մէջ ամէնէն նշանաւորը եղաւ Սմբատ Բագրատունին : Նա քաջ էր և անյաղթելի : Իր ժամանակ մէկը չէր կրնար հաւասարիլ անոր :

Իր քաջութեան նման մեծ էր նաև անոր հասակը, կորովի էր և զօրաւոր : Մինչև խոր ծերութիւն մնաց արագաշարժ և ախոյժ, նոյնիսկ ալեւոր մազերով զարդարուած տարիքին մէջ պահեց իր երիտասարդական գեղեցկութիւնը :

Անոր աչքին մէջ արիւնի բիծ մը կար, որ իր գեղեցկութիւնը կ'աւելցնէր :

Սմբատ Բագրատունի մինչև իր ծերութիւնը մնաց հեռատես և արթուն. իր առաքինութիւն-

ներով ամէնուն սիրտն ու հոգին իրեն կը գրաւէր ու կը կապէր :

Ան իր բոլոր կեանքին մէջ աշխատեցաւ Սաւասրուկի որդի մանուկ Արսաշէսը դահ բարձրացնելու համար :

Սանատրուկ Վաղարշակի սերունդէն էր : Երբ Սանատրուկ ծնաւ Սմբատ Բագրատունիի հօրաքոյրը՝ Սանոս իր կաթովը սկսաւ մեծցնել մանուկը :

Կը պատմեն թէ ձմեռ օր մը , երբ մանուկին մայրը և ծծմայրը կ'անցնէին լեռներու մէջէն, սաստիկ բուք մը ելաւ . մրրիկը ամէն բան տակն ու վրայ ըրաւ , ճամբաները գոցեց և այլևս մէկը միւսը չէր կրնար գտնել :

Սանոտը մանուկը գրկած՝ երեք օր երեք գիշեր մնաց ձիւնի տակ : Մանուկը իր կաթովը կը կերակրէր և իր մարմինի ջերմութեամբ կը տաքցնէր զայն :

Աստուածները հրաշալի կենդանի մը զրկեցին , որ կը պահէր կը պահպանէր մանուկն ու անոր ծծմայր Սանոտը :

Շատերը կը կարծեն թէ այդ կենդանին սպիտակ շուն մըն էր , որը իրենց հետ առած էին կորածները վնտուելու ելնող մարդերը , և շունը պատահելով մանուկին ու դայեակին, անոնց մօտ գացեր էր և պահպան եղեր էր անոնց :

Այդ դէպքէն ետք մանուկը կոչուեցաւ Սաւասրուկ, որ կը նշանակէ Սանոսի տոբ :

Այս Սանատրուկը յետոյ Հայոց Թագաւոր եղաւ :

**Հարցարան.** — Վաղարշակի սերունդէն եղող Թագաւորները ի՞նչ կոչուեցան. — Բագրատունիները ի՞նչ էին. — Ո՞վ էր անոնց ամէնէն նշանաւոր իշխանը. — Ի՞նչպիսի մէկն էր Սմբատ. — Ո՞վ էր Սանատրուկ. — Անոր դայեակը ո՞վ էր. — Ի՞նչ պատահեցաւ. — Ինչո՞ւ Սաւասրուկ կոչուեցաւ :

**Բարոյական բեկադրութիւն.** — Սանոսի անձնութիւնը, պահպան շունին ուշիմութիւնը և այլն նկատելի պարագաներ են :

## ԺԹ. ԴԱՍ

### ԵՐՈՒԱՆԴԱՐՇԱԿՈՒՆԻ

Սանատրուկ իր Թագաւորութեան վերջին տարիներուն շատ վստահութիւն ցոյց տուաւ մարդու մը , որ մօրը կողմէն Արշակունի էր : Անոր անունն էր Երուանդ :

Երուանդ սրտոտ , քաջ և յաղթանդամ երիտասարդ մըն էր և սիրելի եղաւ Սանատրուկին, այնպէս որ Հայոց բոլոր իշխաններուն մէջ առաջին տեղը բռնեց : Ան իր խոնարհութեամբ և առատաձեռնութեամբ ամէնքը իր կողմը կը քաշէր : Ուստի Սանատրուկ մեռաւ, որսի ժամանակ նետէ մը երբ Սանատրուկ մեռաւ, որսի ժամանակ նետէ մը

զարնուելով, Երուանդ օգտուեցաւ շիտթութենէն և իր կողմնակիցներուն օգնութեամբ թագաւոր եղաւ:

Բայց Բագրատունիներու ընտանիքէն մէկը շուզեց զայն թագաւոր պսակել և օրինաւոր թագաւոր ճանչնալ:

Թագաւոր ըլլալէն ետքը Երուանդ կասկածեցաւ որ Սանատրուկի տղաները կրնար ըլլալ որ ուզեն իրենց հօրը գահին տիրանալ, ուստի ամէնքն ալ սպաննել տուաւ:

Միայն տղայ մը ազատուեցաւ այդ կոտորածէն: Այդ ազատուած տղուն անունն էր Արտաշէս:

Ծծմայրը զայն փախցուց դէպի արեւելք և ծովի մը մօտերը պահուըտելով լուր զրկեց Սմբատ Բագրատունիի Սմբատ, իր բերդին մէջ թողելով իր երկու աղջիկները, իր կնոջը և մէկ քանի մարդերու հետ շուտով գնաց Արտաշէսը գտնելու:

Երուանդ երբ իմացաւ Արտաշէսի փախցուիլը և Սմբատի երթալը, ետեւէն մարդ զրկեց որ բռնեն:


Այդ պատճառով Սմբատ գտնելով Արտաշէսը, ստիպուեցաւ երկար ժամանակ ծածուկ, զգեստները փոխած, լեռները ու դաշտերը թափառիլ: Մինչեւ որ յարմար ժամանակը գտնելով փախաւ Պարսից թագաւորին մօտ:

Սմբատի քաջութեան համբաւը շատոնց հա-

սած էր Պարսից թագաւորին, որ շատ պատիւներ տուաւ անոր. իսկ Արտաշէսը, որ Արշակունի էր և իր հեռաւոր ազգականը, կրթեց իր որդիներուն հետ:

Երուանդ սպասեց յարմար ատենին Արտաշէսը սպաննելու համար:

Երուանդ կը վախնար հայ նախարարներէն, կը վախնար նաև Ժողովուրդէն: Ուստի մտածեց չինել իրեն համար քաղաք մը:




Երուանդաւոս

Թագաւորը ընտրեց Արմաւիրէն քիչ մը հեռու դէպի արեւմուտք բլուր մը, Երասխի ափը: Պատեց այդ բլուրը ամուր պարիսպներով և այնտեղ տեղափոխեց իր պալատը թագաւորական բոլոր գանձերով և զարդերով:

Քաղաքին ներսը փորել տուաւ խոր խոր ջր-

հորներ : Իսկ միջնաբերդը ամրացուց բարձր պարիսպներով և պարիսպին մէջ պղինձէ դուռներ շինեց, դէպի վեր բարձրանալու համար ալ երկաթէ սանդուղներ :

Այս ամուր քաղաքը Երուանդ կոչեց իր անունով Երուանդաշահ :




Ախուրեան գետը

Բայց նա չուզեց այստեղ փոխադրել Արմաւիրի կուռքերը, որովհետեւ կը վախնար որ չըլլայ թէ շատ ժողովուրդ հաւաքուի իր նոր քաղաքը՝ զոհաբերութիւններու համար և ինքը անկարող ըլլայ զգուշութեամբ պահպանել իր պալատը :

Երուանդաշատէն քիչ մը հեռու, դէպի հիւսիս, փոքր քաղաք մը շինեց Ախուրեան գետի վրայ և այնտեղ փոխադրեց բոլոր բաղինները :

այդ պատճառով քաղաքը կոչուեցաւ Բագարան : Այստեղ շինեց մեհեաններ :

Գետի հիւսիսային եզերքը մեծ անտառ մը տնկել սուսաւ ան ու պատով շրջապատեց : Մէջը լեցուց վայրի այծեամներով, եղնիկներով, եղջերուներով, վայրի էշերով ու վարաղներով, որոնք այդ տեղ կը բազմանային, կը շատնային :



Երուանդակեցի մնացորդները

Այս անտառը կոչուեցաւ Ծննդոց անտառ : Այստեղ Երուանդ իր սիրտը կ'ուրախացներ սրսերով : Բայց բոլոր շինութիւններուն մէջ ամէնէն գեղեցիկը և չքնազը Երուանդակեցին էր : Այս քաղաքը շինեց ան Երասխի հիւսիսային կողմը, լայն հովիտի մը մէջ :

Այդ քաղաքը մինչև հիմակ կը մնայ իր աւերակներով: Բարձր շէնքեր, աշտարակներ, ծաղկանոցներ, այգիներ շինած էր հոն:

Երուանդ իր այս բոլոր շինութիւններով չկրօցաւ նախարարներուն և ժողովուրդին սէրը վատրկիլ: Նա միշտ տխուր էր ու կը վախնար որ Արտաշէսը կուգայ ու զինքը սպաննելով գահին կը տիրանայ:

Հարցարան. — Ո՞վ էր Երուանդ. — Սանատրուկ ինչպէս մեռաւ. — Երուանդ ինչ ըրաւ. — Արտաշէսը ո՞վ փախցուց. — Սմբատը ո՞ր գնաց. — Երուանդ ինչ քաղաքներ շինեց. — Ո՞ր անտառը տնկել տուաւ. — Ժողովուրդէն սիրուեցա՞ւ:

Քարոյական քեյադրուրիւն. — Շեշտել թէ Երուանդ ճակատակ շինարար մէկը ըլլալուն, ատելի դարձաւ ամէնուն, որովհետև տիրասպան մըն էր ինքը, իր շինութիւնները իր քմահաճոյքին ու երկիւղին համար կը կատարէր, ժողովուրդին աշխատանքը կ'ուզէր շահագործել ու վայելել:

Ի. ԴԱՍ

ԵՐՈՒԱՆԴ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ

Երուանդ միշտ երկիւղի մէջ էր: Անհանգըստութենէն չէր կրնար քնանալ. նոյնիսկ եթէ քնանար սարսափելի երազներ կը տեսնէր:

Ան դեսպաններ զրկեց Պարսից թագաւորին մօտ և ըսաւ .

— Ո՞վ իմ ազգականը, ինչո՞ւ քու տանդ մէջ կը մեծցնես Արտաշէսը, որ մեր սերունդէն չէ և իմ թագաւորութեանս դէմ է. ինչո՞ւ ականջ կը դնես աւաղակ Սմբատի խօսքերուն, ինչո՞ւ մտիկ կ'ընես ատոր և կը հաւատաս իբր թէ այդ տղան Սանատրուկի որդի է, Արչակունի և քեզի արենակից է: Ան Սանատրուկի որդի չէ. այլ Սմբատը կը խարէ, հովիւներու տղայ մը դտած է և կ'ուզէ Արչակունի շինել, սուտ սուտ բաներ կը հնարէ:

Երուանդ շատ անգամ մարդ զրկեց նաև Սմբատի մօտ և ըսաւ .

— Ինչո՞ւ այդքան կ'աշխատիս: Ծծմայրը քեզ խարած է. ինչո՞ւ իմ դէմ հովիւի տղայ մը կը մեծցնես:

Բայց Պարսից թագաւորը պատասխան չըրուաւ, իսկ Սմբատ այնպիսի կ'ընէր, անախորժ և ծանր խօսքերով ետ դարձուց իր մօտ եկողները, որ Երուանդ սաստիկ բարկացաւ և մարդ զրկեց Սմբատի երկիրը ու անոր երկու աղջիկները, Սմբատանուշը և Սմբատուհին գերի տարաւ:

Արտաշէս երկար ժամանակ մնաց Պարսկաստանի մէջ: Ան այլևս մեծ տղայ էր, քաջ, լաւ ճի հեծնել գիտէր ու կը կռուէր: Իսկ Արտաշէսի դայեակ Սմբատը մեծ անուն հանեց իր քաջութիւններով:

Պարսիկ իշխանները խնդրեցին իրենց թագա-

ւորէն որ վարձատրէ Սմբատը և անոր ուղածը շնորհէ :

Թագաւորը պատասխանեց .

— Իմացէք, ի՞նչ կը փափաքի այդ քաջ մարդը : Եւ անոնք պատասխանեցին .

— Սմբատը կը փափայի որ Սանատրուկի որդի Արտաշէսը , թագաւորութենէ զրկուած քուարենակիցդ ու հարազատը վերադարձնես թագաւորական գահը :

Թագաւորը ընդունեց և Սմբատի տուաւ իր զօրքին մէկ մասը, որ տանի Արտաշէսը նստեցնէ Սանատրուկի գահին վրայ :


Սմբատ շուտով ճամբայ ելաւ :

Երուանդ երբ իմացաւ որ Սմբատ Կուգայ Պարսից զօրքերով, շուտով զինուորներ հաւաքեց, Հայերէն, Վրացիներէն և ուրիշ գրացի ազգերէն, որը աղաչանքով, որը պարգեւներով :

Երկու բանակները իրարու հանդիպեցան : Երուանդի զինուորներուն մէկ մասը Սմբատը և Արտաշէսը տեսներով միւս կողմը անցաւ : Երուանդի բանակին մէջ շփոթութիւն ինկաւ :

Երուանդ ուղից նուէրներ տալով զինուորները իրեն մօտ պահել, առատ առատ պարգեւներ տուաւ . բայց քանի նուէրներ կուտար, այնքան ատելի կ'ըլլար :

Պատերազմը սկսաւ Ախուրեան գետին եզերքը : Սմբատ հնչեցուց պղինձէ փողերը և առաջ



Սմբատ քաղաւոր կը պահի Արտաշէսը

ինկաւ : Երուանդի զինուորներուն միւս մասն ալ սարսափեցան և Սմբատի կողմն անցան, իսկ Վրացիները չզիմացան ու վախան :

Կռիւին մէջ Արտաշէսի ծծմօր որդին Գիսակը մեծ քաջութիւններ ըրաւ, շատերը սպաննեց և շատերը փախցուց, բայց թշնամիի սուրէն անոր դէմքին կէսը կտրուեցաւ ու ինկաւ մեռաւ: Եթէ Գիսակը չըլար Արտաշէսը պատերազմին մէջ պիտի մեռնէր:

Երուանդի բոլոր զինուորները ցրուելով, Երուանդն ալ սկսաւ փախչիլ, ձի հեծած գնաց իր մայրաքաղաքը: Սմբատ իր քաջերով հալածեց Երուանդը, որ սպաննուեցաւ:

Արտաշէս հրաման ըրաւ որ Երուանդը փառաւոր կերպով թաղեն, որովհետեւ Արշակունի մօրմէ մը ծնած էր ան:

Երուանդի մահէն ետքը Սմբատ մտաւ թագաւորական գանձարանը, փնտռեց հոն ու գտաւ Սանատրուկի թագր, բերաւ դրաւ Արտաշէսի գլուխը և թագաւորեցուց Հայաստանի վրայ:

Այդ օրը ամէնէն երջանիկ օրն էր Սմբատի համար:

**Հուրցարան.**— Երուանդ ինչ լուր զրկեց Պարսից թագաւորին. — Սմբատին ինչ լուր զրկեց. — Սմբատ ինչպէս պատասխանեց. — Սմբատի քաջութեան համար Պարսից թագաւորը ինչ ըրաւ. — Երուանդի զինուորները ինչ ըրին երբ Սմբատն ու Արտաշէսը տեսան. — Կռիւին մէջ Գիսակը ինչ քաջութիւն ըրաւ, օ՞վ պատեց, դէմքը ինչ եղաւ. — Արտաշէս ինչ հրաման ըրաւ. — Սմբատ ինչպէս պատկեց Արտաշէսը:

**Քարոյական քելադուրիւն.**— Գիսակի անձնուիրութիւնը, Երուանդի շուայ առատաձեռնութեան անօգուտ ըլլալը, Արտաշէսի վեհանձնութիւնը նկատի առնուելիք թելադրութեան նիւթեր են:

ԻՍ. ԴԱՍ

ԱՐՏԱՇԷՍ ՇԻՆԱՐԱՐ

Արտաշէս երբոր բարձրացաւ իր հօրը գահը, աշխատեցաւ իր երախտագիտութիւնը յայտնել իրեն բարիք ընողներուն:


Ան մեծամեծ պարգեւներ տուաւ պարսիկ զօրքերուն, որոնք զինքը պաշտպանած էին և իրեն համար կռուած, արիւն թափած էին: Սրտանց շնորհակալութիւն յայտնելով իրենց տեղերը զրկեց զանոնք:

Չմոռցաւ իր անձնուէր դայեակ Սմբատը. բոլոր նախարարներէն բարձր կարգեց զայն, տըւաւ անոր թանկագին քարերով բանուած պսակ, ոսկի դգալ և պատառաքաղ: Իր բոլոր զօրքերուն հրամանատար նշանակեց զայն:

Շատ յաւեցաւ որ իր ստնտուի որդին Գիսակը մեռած էր: Գիսակի որդին՝ Ներսէսը բարձր պատիւի արժանացուց. ընդարձակ հողեր տուաւ անոր, և անոնց ընտանիքը կոչեց Գիւմախեան և նախարարութիւն, այսինքն՝ « Դէմք - կէսեան » նախարարութիւն:

Արտաշէս ուրիշ բազմաթիւ գործեր ալ ըրաւ, շատերը պատուեց և բարձրացուց: Շինեց նաև Գիւղեր, քաղաքներ և մեծամեծ շէնքեր:


Բոլոր Հայերը զայն սիրեցին ու յարգեցին =  
Անոր անունը տարածուեցաւ : Ամէն մարդ գիտէր  
թէ Արտաշէս քաջ է, բարի է և զորաւոր :



Արտաշէս

Անոր օրով նշանաւոր թագաւոր մը կար ,  
Աննիրալ անունով : Աննիրալ քաջ, յանդուգն իշ-

խան մըն էր : Մեծ ճակատամարտներ մղած էր ,  
ամէնուն յաղթած էր : Աշխարհի մէկ կարեւոր  
մասը գրաւած էր , բայց օր մըն ալ յաղթուե-



ԱՅՆԻՐԱԼ

ցաւ , և գիտնալով որ Արտաշէս քաջ և բարի է ,  
անոր քով եկաւ ու անոր հիւր եղաւ :  
Արտաշէս սիրով ընդունեց Աննիրալը : Անոր  
հետ որսի կ'երթային և խնջոյքներ կը սարքէին :  
Օր մը որսի գացած ժամանակ Երասխ գե-  
տին մօտերը անտառ մը տեսան , գետին հիշտ

եզերքը : Եթէ այդ տեղ քաղաք մը շինուէր և բերդեր կանգնուէր, մարդ չէր կրնար այն քաղաքը գրաւել :

Աննիբալ ըսաւ Արտաշէսի .

— Ահա գեղեցիկ տեղ մը . եթէ հոս քաղաք մը շինես, շատ ամուր պիտի ըլլայ, ոչ մէկ թագաւոր պիտի կրնայ դիւրութեամբ գրաւել զայն :

Արտաշէս ինքն ալ հաւնեցաւ այդ տեղին և գեղեցիկ քաղաք մը շինեց :

Իրեն անունով այդ քաղաքը կոչուեցաւ Արսաշատ : Բաղաքին մէջ մեհեան մը շինեց և բոլոր կուռքերը հոն փոխադրեց : Այնտեղ փոխադրեց նաև Երուանդաշատի և Արմաւիրի գեղեցիկ զարդարանքները :

Արտաշատը եղաւ Հայաստանի ամէնէն գեղեցիկ և ամէնէն հարուստ քաղաքը :

Հարցարան. — Արտաշէս թագաւոր ըլլալէն ետքը ի՞նչ ըրաւ. — Պարսից զօրքերուն ի՞նչ տուաւ. — Սմբատը ի՞նչպէս պատուեց. — Դիտակի որդիին ի՞նչ պատիւ տուաւ. — Ի՞նչ շինութիւններ ըրաւ. — Ո՞վ էր Աննիբալ. — Արտաշատը ո՞վ շինեց և ո՞ւր :

Քառոյսական քիչադրուրիւն. — Այն իշխանները միայն ժողովուրդներէն սիրուած են, որոնք ժողովուրդին համար ապրած են. շինարարութիւնը հին իշխաններու սիրուածութեան պատշառներէն մէկն եղած է :

ԻԲ. Դ Ա Ս

Խ Ո Ս Ր Ո Վ Ե Ի Ա Ն Ա Կ

Արտաշէս թագաւորէն ետքը Հայերը ուրիշ նշանաւոր թագաւոր մըն ալ ունեցան : Անոր անունը Խոսրով էր :

Խոսրով շատ քով և խելացի էր : Անոր ժամանակ Հայերը շատ հանգիստ էին, որովհետև թշնամիները կը վախնային անկէ և չէին յարձակեր Հայաստանի վրայ :

Պարսիկներուն հետ բարեկամ էր Խոսրով, որովհետև անոնց թագաւորը Խոսրովի ազգականն էր :

Օր մը Պարսիկ իշխան մը, Արսաշի անունով, բաղմաթիւ զինուորներ իր կողմը շահելով, ոտք ելաւ Պարսից թագաւորին դէմ և ուզեց ինքը ըլլալ թագաւոր :

Յարձակեցաւ Պարսից թագաւորին զինուորներուն վրայ, մէկ երկու անգամ յաղթեց անոնց և թագաւորն ալ սպաննեց :

Խոսրով երբ որ իմացաւ իր ազգականին դժբախտութիւնը շատ ցաւեցաւ և բարկացաւ : Հաւաքեց իր զինուորները և քալեց Արտաշիւրի վրայ : Արտաշիւր իր բանակը առաւ և Խոսրովի դէմ ելաւ : Բայց Հայոց քաջերը այնպէս նետուեցան անոր զօրքերուն վրայ, որ ամէնքն ալ փախցուցին :

Արտաշիրն ալ ստիպուեցաւ փախչիլ: Բայց նորէն զօրք հաւաքեց, նորէն պատրաստուեցաւ և Խոսրովի դէմ ելաւ:

Խոսրով այնպիսի ջարդ մը տուաւ անոր զինուորներուն որ այս անգամ Արտաշիր հաղիւ ինքզինքը կրցաւ աղատել:

Հայոց թագաւորը կ'ուզէր իր ազգականներէն մէկը դնել Պարսից թագաւոր, բայց քիչ մը ժամանակ սպասեց:

Արտաշիր տեսնելով որ Խոսրովին և Հայոց քաջերուն դէմ չպիտի կրնայ ելնել ու միշտ պիտի յաղթուի անոնցմէ, խորհեցաւ խարդախութեան, խարէութեան դիմել:

Իր մեծամեծ նախարարները քովը կանչելով ըսաւ անոնց.

— Ձեզմէ ո՞վ կրնայ ինծի օգնել: Խոսրով թագաւորը ինծի շատ հոգ կը պատճառէ: Ձեզմէ ով որ կարենայ բարեկամութիւն կեղծելով Հայոց թագաւորը կամ թոյնով և կամ սուրով սպաննել, անոր մեծամեծ պարգեւներ պիտի տամ: Այս գործը ամէնէն աւելի Խոսրովի ազգականները կրնան ընել: Եթէ անոնցմէ մէկը այս բանը յաջողցնէ թագաւորական պատիւ և զգեստներ պիտի տամ անոր. ինչմէ ետքը երկրորդ պիտի ըլլայ ան:

Արտաշիրի խորհրդականներուն մէջ կար Անակ

անունով մէկը, որ Խոսրովի ազգականներէն էր: Ան ըսաւ.

— Տէր արքայ, ես կը խոստանամ երթալ Խոսրովը սպաննել: Իբրև թէ քեզմէ վախնալով պիտի փախչիմ և Հայաստան մտնեմ:

Արտաշիր ընդունեց: Այն ատեն Անակ իր տունն ու տեղը ժողովեց, իր ծառաներն ու ազգականները առաւ և դէպի Հայաստան եկաւ:

Իր առջևէն մարդ զրկեց Հայոց թագաւոր Խոսրովին և ըսաւ.

— Ո՞վ իմ ազգականը, ես չուզելով Արտաշիրի հնազանդիլ, վախայ անոր քովէն և եկայ քեզի:


Խոսրով երբոր լսեց Անակի Հայաստան գալը, անմիջապէս օգնական զինուորներ զրկեց անոր առջև, որ իրեն մօտ բերին:

Անակ եկաւ: Խոսրով անոր մեծ պատիւներ ըրաւ. իբրև ազգական անոր հետ համբուրուեցաւ, իրեն հետ սեղան նստեցուց և խնջոյքներ սարքեց: Երկուքը մէկ միասին որսի կ'երթային Խոսրով թագաւորի անտառներուն մէջ, ուր շատ երէններ կը գտնուէին:

Անգամ մը սովորութեան համեմատ Խոսրով և Անակ ձի հեծած լեռը որսի գացին: Իրենց հետ առած էին բազմաթիւ շուներ: Անոնց հետ կ'երթային նաև ուրիշ իշխաններ և զինուորներ: Երբ անտառը մտան, գեղեցիկ եղնիկ մը տե-

սան դիմացի բլուրին վրայ : Ձիերը քշեցին դէպի  
այն կողմը :

Անակ տեսաւ որ անտառին մէջ իրենք եր-



Կեսարիա քաղաքը

կուքը մինակ են : Բաշեց իր աղեղը և նետով մը  
ձիէն վար գլորեց խոսրով թագաւորը : Ինքն ալ  
իր ձին քշեց և սկսաւ փախչիլ :

Նախ մնացած իշխանները և զինուորները  
հասան եկան խոսրով թագաւորի գտնուած տե-  
ղը , տեսան որ թագաւորը ձիէն ինկեր , գետինը  
փռուեր է :

Մօտեցան : Թագաւորը մեռնելու վրայ էր :  
Երբ որ իր իշխանները տեսաւ . ցած ձայնով մը  
ըսաւ .

— Անակ վիրաւորեց զիս . բռնեցէք զայն և  
ինքն ալ մեռցուցէք ու իր ընտանիքն ալ սուրէ  
անցուցէք : Վրէժս լուծեցէք :

Խոսրով քիչ ետքը հոգին տուաւ :

Իշխանները քշեցին իրենց ձիերը , Արտաշատ  
քաղաքին կամուրջին մօտ հասան Անակի ետեւէն  
և անմիջապէս սպաննելով Երասխ գետը նետե-  
ցին : Անոր ընտանիքն ալ սուրէ անցուցին , բոլորը  
մեռցուցին :

Այդ կոտորածէն ազատեցաւ միայն Անակի մէկ  
փոքրիկ տղան , որուն անունն էր Գրիգոր :

Գրիգորը ստնտու մը ունէր : Այդ ստնտուն ,  
որովհետեւ շատ կը սիրէր մանուկը , փախցուց  
զայն և տարաւ Կեսարիա :

**Հարցարան.** — Ո՞վ էր խոսրով . — Ի՞նչպէս մէկն էր . — Ո՞վ էր  
Արտաշիր . — Ի՞նչ ըրաւ . — Խոսրով ինչո՞ւ բարկացաւ , ի՞նչ ըրաւ . —  
Արտաշիր ի՞նչ ըսաւ իր նախարարներուն . — Անակ ի՞նչ պատասխա-  
նեց . — Ի՞նչ լուր զրկեց խոսրովի . — Խոսրով ի՞նչպէս ընդունեց  
Անակը . — Ի՞նչպէս սպաննուեցաւ խոսրով . — Մեռած ատենը ի՞նչ հրա-  
մայեց . — Անակի ընտանիքէն ո՞վ ազատուեցաւ , որո՞ւ միջոցաւ և  
ո՞ր տարուեցաւ :

**Քարոյական քելագրութիւն.** — Վեր առնել խոսրովի բա-  
նօսիրութիւնը , անձնուիրութիւնը և Անակի դաւաճանութիւնը ,  
նրո՞ւ հակադիր նկարագրով կը ներկայանան այս դէմքերը :  
Մանտուի անձնուէր արարքն ալ կարելի է շեշտել :

### Ի Գ . Դ Ա Ս

#### ՄԵԾՆ ՏՐԴԱՏԻ ՔԱՋՈՒԹԻԻՆՆԵՐԸ

Արտաշիր երբ ըսեց Խոսրովի սպաննուիլը , շատ ուրախացաւ :

Անմիջապէս զօրք ժողովեց և Հայաստանի վրայ եկաւ : Հայ նախարարները իրենք ալ շուտով պատրաստուեցան և գիմադրեցին Արտաշիրի զինուորներուն :

Բայց յաղթուեցան , որովհետև Խոսրովինման քաջ թագաւոր մը չունէին իրենց գլուխը :

Արտաշիր յաղթելով հայ նախարարներուն , տիրեց Հայաստանի , և հրամայեց որ Խոսրովի ցեղը սուրէ անցնեն :

Այս դժբախտութենէն ազատուեցան երկու հոգի , ատոնցմէ մէկն էր Խոսրովի որդին՝ Տրդատը : Հայրենասէր նախարար մը , որ Տրդատը շատ կը սիրէր , առաւ զայն և Հռոմ փախցուց :

Իսկ ազատուածներէն միւսն էր թագաւորին աղջիկը և Տրդատի քոյրը՝ Խոսրովիդուխս : Օտար Ամատունի անուն նախարար մը փախցուց Խոսրովիդուխսը և թագաւորին գանձերուն հետ տարաւ պահեց ամուր բերդի մը մէջ :

Արտաշիր անկէ ետքը տիրեց Հայաստանին և սկսաւ սոսկալի կերպով նեղել Հայերը . անոնցմէ

շատ շատ դրամ և գանձեր առաւ իրրև տուրք որ ամէն կերպով սկսաւ չարչարել զանոնք :

Հայերը կը փափաքէին որ իրենց սիրելի թագաւորի տղան՝ Տրդատը շուտով մեծնայ և գայ զիրենք ազատէ Արտաշիրի ձեռքէն :



Խոսրովիդուխս

Տրդատ Հռոմի մէջ մեծցաւ և կրթուեցաւ : Անոր քաջութիւնը մեծ էր , անոր նմանը չի կար : Շատ գեղեցիկ էր և բարձրահասակ :

Բազմաթիւ քաջութիւններ գործեց ան և Հռոմայեցիները զարմացուց : Անգամ մը Հռոմի կայսրին դէմ պատերազմի

ելած էր վայրենի և քաջ աղբի մը թագաւորը ։  
Գոթաց թագաւորն էր ան ։ Տրդատ ալ կայսրին  
զինուորներուն մէջ էր ։

Գոթաց թագաւորը լուր զրկեց Հռոմայեցիներու  
թագաւորին և ըսաւ ։

— Եթէ կ'ուզես առանց արին թափելու  
գործը լմնցնել, ելիր և իրարու հետ կռուինք,  
մենամարտինք ։ Մեզմէ ով որ յաղթէ, ան թող  
ըլայ թագաւոր մեր երկու երկիրներուն վրայ ։

Հռոմայեցիներու կայսրը շատ վախցաւ Գոթաց  
թագաւորէն, որովհետև ան աւելի ուժով  
էր և բարձր հասակով ։


Բայց իշխանները պատմեցին թէ իրենց բա-  
նակին մէջ գտնուած հայը՝ Տրդատ շատ քաջու-  
թիւններ ըրած է և կրնայ Գոթաց թագաւորին  
հետ կռուելով յաղթել ։

Կայսրը վստահելով Տրդատի քաջութեան  
վրայ, իր թագաւորական ղեկսաները անոր հագ-  
ցուց ։

Տրդատ ղէներելով զինուած դէմ գնաց Գոթացիին,  
որ փրփրելով, հայհոյելով յարձակեցաւ  
և սուրը քաշեց ։

Բայց Տրդատ ա՛յնպէս ուժով նետուեցաւ ա-  
նոր վրայ, ա՛յնպէս շուտով բռնեց անոր բազուկ-  
ներէն, որ Գոթաց թագաւորը սասանեցաւ մնաց՝  
Տրդատ բռնելով զայն Հռոմայեցիներու կայսրին  
անջև տարաւ ։

Կայսրը հիացաւ Տրդատի քաջութեան վրայ  
և իմանալով որ Հայոց թագաւորի որդին է, թագ



Օստ կը յանձնէ Խոսրովի որդիները եւ գանձերը

գրաւ անոր գլուխը, թագաւոր պսակեց և զին-  
ուորներ տուաւ որ երթայ Հայաստանի թշնամի-  
ները վռնտէ և իշխէ ։

Երբ Տրդատի թագաւոր ըլլալուն և Հայաստան գալուն լուրը մեր նախարարներուն ականջը հասաւ, ամէնքն ալ դացին կեսարիա դիմաւորելու իրենց թագաւորը:

Օտա Ամատունի նախարարը հոն տարաւ Տրդատի քոյրը՝ Խոսրովիդուխտը և իր պահած դանձերը. անոնք բոլորը յանձնեց Տրդատի:

Տրդատ շատ ուրախացաւ և մեծ պատիւներ տուաւ Օտա Ամատունիին և ուրիշ հայ նախարարներուն:

**Հարցարան.**—Արտաշէս երբ լսեց Խոսրովի մահը ի՞նչ արու.— Ի՞նչ հրաման արու.— Տրդատ որո՞ւ ձեռքով ազատուեցաւ.— Խոսրովիդուխտը ո՞վ աղատեց.— Տրդատ ի՞նչպէս մէկն էր.— Գոթաց թագաւորը ի՞նչ արու.— Տրդատ ի՞նչ արու.— Կայսր ինչո՞վ պատուեց.— Հայ նախարարները ո՞ւր գացին.— Օտա ի՞նչ յանձնեց:

**Բարոյական քելադուրիւն.**— Օտա Ամատունիի և միւս նախարարին (Արտաւազդ Մանգակունի) անձնուիրութիւնը շեշտելու նպատակով աշակերտներու մտքի մակարդակին, կարելի է քիչիկ մը ծանօթութիւն տալ Հռոմ քաղաքի և կայսր յորջորջումի մասին:

Ի Գ. Դ Ա Ս

Տ Ր Դ Ա Տ Ե Ի Գ Ե Դ Ռ Ե Հ Ո Ն

Տրդատ իր քաջութիւնով շուտով տէր եղաւ Հայաստանի:

Գիտէ՞ք արդէն, սիրելի աշակերտներ, թէ Տրդատի հայրը Խոսրով սպաննուեցաւ Անակէն և Արտաշիր սուրէ անցնել տալով անոր ընտանիքը տիրեց Հայաստանին:

Տրդատ ուզեց իր հօրը և հայրենիքին վրէժը լուծել, ուզեց պատժել Պարսիկները, ուստի մեծ զօրութիւնով յարձակեցաւ անոնց վրայ, Հայոց երկիրէն վաճառեց զանոնք և երկիրը խաղաղեցուց:

Յետոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչի միջոցաւ քրիստոնեայ եղաւ ու սկսաւ մեհեանները կործանելով եկեղեցիներ հիմնել:

Անդամ մը երբ Տրդատ ճամբորդութիւն ընելու, հեռու տեղ երթալու կը պատրաստուէր, Պարսիկները և ուրիշ չար թշնամիներ յարձակեցան Հայաստանի վրայ:

Այդ թշնամիներուն իշխանն էր Գեդուեսին: Տրդատ իմանալով թշնամիներուն յարձակումը, չհեռացաւ իր երկիրէն և կարգի դրաւ իր զինուորները, քաջալերեց զանոնք և թշնամիներուն դէմը ելաւ:

Նա իր զինուորները չորս մասի բաժնեց . երեք մասը անտառներու մէջ ասդին անդին գրաւ , որ պահուին , իսկ միւս մասը թշնամիին առջևը հանեց :

Հայ քաջերը Գեղուեհնի զօրքը սկսան շարդել : Ատոր համար անոնք ամէնքը սկսան փախչիլ դէպի անտառները : Այն ատեն հոն պահոււրտած հայ զինուորները յարձակեցան անոնց վրայ , մեծ մասը սպաննեցին , մէկ մասը գերի բռնեցին և փոքր մաս մըն ալ փախցուցին :

Գեղուեհնն ուրիշ զինուորներ ժողուելով լուր զրկեց Տրդատին և հպարտութեամբ ըսաւ .


— Եթէ չես ուզեր որ քու երկիրդ տակն ու վրայ ընեմ , ձեռքդ ինկած գերիները շուտով ետ դարձուր և անոնց վրայ դրամ ալ աւելցուր ու միասին զրկէ :

Տրդատ փոխանակ պատասխանելու , առաւ զինուորները և գնաց անոր լաւ դաս մը տալու :

Պատերազմի ժամանակ երբ Տրդատ թշնամի զօրապետ մը իր առջևը ձգած կը հալածէր , գաղտնի ետուէն հասաւ Գեղուեհնն , որ անոր նման ուժեղ հսկայ մարդ մըն էր : Գեղուեհնն իր ձիին երկար շուանը նետեց և Տրդատին ձախ ուսին ու բազուկին մէջ անցուց :

Կայծակի արագութեամբ դարձաւ Տրդատ , բռնեց շուանը և կեցուց իր թշնամին :

Գեղուեհնն վախնալով փորձեց փախչիլ , բայց



Տրդատ Գեղուեհնինը երկուքի կը կտրէ

Տրդատ իր սուրը վերցնելով ա՛յնպէս մը իջեցուց .

որ Գեղուեհոն երկու կտոր եղաւ ու անոր նստած ձիին մէկ կտորն ալ կտրուեցաւ :

Անկէ ետքը հայ քաջերը շատ թշնամիներ սպաննեցին և Հայաստանը աղատեցին անոնց ձեռքէն :

Հարցարան. — Տրդատ ինչպէս լուծեց իր հօրը վրէժը. — Պարսիկները և Գեղուեհոն ինչ ըրին. — Տրդատ ինչ ըրաւ երբ իմացաւ անոնց յարձակումը. — Ինչպէս բաժնեց իր ղեկուորները. — Գեղուեհոն ինչ հպարտ խօսքեր ըրաւ. — Տրդատ ինչպէս պատասխանեց. — Գեղուեհոն ինչպէս սպաննուեցաւ :

Քառոյական քելադուրիւն. — Այս դասի մէջ կ'արժէ քանի մը թելադրութիւններով աւելի լուսաբանել Լուսաւորիչի քարոզութիւնը, Տրդատի քրիստոնեայ դառնալը ևն. , որոնց մասին խօսուած է Տարբ. Ա. հատորին մէջ :

Ի Ե. Դ Ա Ս

Տ Ր Դ Ա Տ Ե Ի Ա Շ Խ Է Ն

Տրդատ ուրիշ բաղձալովի քաջութիւններ ալ գործեց և ամէնքէն սիրուեցաւ ու յարգուեցաւ :

Գեղուեհոնը սպաննուելէն ետքը ալիս ուրիշ թշնամի ոտք չկոխեց Հայաստան մինչև Տրդատ թագաւորին մահը :

Մեր երկիրը բարեկարգուեցաւ : Մեր պապերը հանգիստ սկսան իրենց երկիրը մշակել :

ցանել և քաղել : Մանր տուրքեր չէին տար թըշնամի թագաւորներուն :

Տրդատ անգամ մը լսեց որ Ալաններու թագաւորին աղջիկը շատ գեղեցիկ ու խելացի է : Անոր անունը Աշխէն էր, Հայոց թագաւորին արժանի էր :

Ուստի Տրդատ նախարար մը դրկեց Ալաններու թագաւորին, մեծամեծ պարգեւներ տուաւ անոր և առաջարկեց որ իր սիրուն աղջիկը իրեն կին տար :

Ալաններու թագաւորը սիրով ընդունեց և ըսաւ .

— Իմ սիրելի աղջիկը արժանի է Հայոց քաջ և գեղեցիկ թագաւորին :

Մեծ հանդէսներ սարքեցին, հարսնիք բռնեցին : Երկու երկիրներու ժողովուրդները ուրախութեան տօն կատարեցին, երգեցին ու պարեցին :

Մարգարիտներով, ոսկիներով ու թանկագին քարերով զարդարեցին Հայոց Տիկինը :

Աշխէն Տիկինը շատ գեղեցիկ և շատ բարի էր : Նա միշտ իր խելքով օգնական եղաւ Տրդատին : Անոր հետ մէկտեղ քրիստոնեայ եղաւ և մկրտուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչէն :

Նա իր օրերը կ'անցնէր միշտ բարիք գործելով, աղքատները կը խնամէր, կը հագուեցնէր ու

կը կերակրէր : Ամէնուն հետ անուշ լեզուով կը խօսէր :

Ատոր համար Տրդատի նման շատ սիրելի եղաւ Հայերուն :

**Հարցարան.** — Տրդատի ժամանակ Հայաստան ինչ վիճակ ունեցաւ.—Ո՞ր էր Աշխէն.—Տրդատ ինչ լուր դրկեց Ալաններու թագաւորին.— Ան ինչ պատասխանեց.—Աշխէն ինչպիսի մէկն էր.—Ինչե՞ր կ'ընէր :

**Քարոյական քելադուրիւն.** — Աշխէնի դէմքը պէտք է կարելի եղածին չափ ցայտուն կերպով լուսաւորել, ցուցնել անոր առաքինութիւնները և թելադրել աշակերտներուն ունենալ նոյն բարեմասնութիւնները :

## ԻԶ. ԴԱՍ


### Մ Ե Ծ Ն Ն Ե Ր Ս Է Ս

Մեծն Ներսէս թագաւոր մը չէր, բայց շատ մը թագաւորներու բարեկամը և օգնականն էր : Անոր պատմութիւնը շատ ազուրոր բաներ կը պարունակէ :

Ներսէս Ս. Գրեգոր Լուսաւորիչին թոռան թոռն էր : Նա փոքրիկ մանուկ եղած ատենը շատ խելօք և հնազանդ էր իր ծնողքին : Պզտիկութեանը կը գտնուէր Կեսարիա քաղաքը : Հոն դըպրոց գնաց և սորվեցաւ շատ օգտակար բաներ :

Յետոյ մեծնալով ամուսնացաւ Սանդուխտ անուհով օրիորդի մը հետ :

Ներսէս ունէր բարձր հասակ, գեղեցիկ դէմք : Ամէն մարդ զինքը կը յարգէր, որովհետև շատ



Մեծն Ներսէս

լուրջ էր, պարապ տեղը չէր խնդար, տգեղ կատակներ չէր ընէր և միշտ խորհելով կը խօսէր : Հայոց կաթողիկոսը մեռած էր, ուստի բոլոր մեծ իշխանները, եպիսկոպոսները, վարդապետները

ըր հաւաքուեցան նոր կաթողիկոս ընտրելու համար : Ամէնքն ալ յարմար գտան Ներսէսը , որ Հայոց թագաւորին զինակիրն էր : Ներսէս շնորհունեց կաթողիկոսութիւնը և ըսաւ .

— Ես արժանի չեմ այդ սուրբ պաշտօնին , ուրիշ աւելի արժանաւոր մը ընտրեցէք :

Բայց բոլոր ժողովուած Հայերը պնդեցին որ ընդունի , որովհետև ամէնէն արժանաւորը ինքն էր : Մեծ դժուարութեամբ ընդունել տուին անոր :

Ապա կաթողիկոս ձեռնադրելու համար զըրկեցին Կեսարիա : Անոր հետ կ'երթային քսանև հինգ եպիսկոպոսներ , նոյնչափ մեծ իշխաններ և չորս հազար զինուորներ :

Ներսէս նստած էր սպիտակ ջորիներէ քաշուած գեղեցիկ կառքի մը մէջ :

Երբոր Կեսարիա հասան , հոն մեծ պատիւով ընդունեց Եւսեբիոս եպիսկոպոսը , որ փառաւոր հանդէսով Ներսէս կաթողիկոս ձեռնադրեց և օծեց :

Ձեռնադրած ատենը , երբոր Ներսէս եկեղեցիի սեղանին առջև կեցած էր , պատուհանէն սպիտակ աղանի մը ներս մտաւ ու գնաց անոր գլուխին վրայ կեցաւ :

Ժողովուրդը այս նշանը Աստուծմէ զբկուած համարելով ուրախացաւ և սկսաւ յարգել Ս. Ներսէսը :

Փառաւոր կերպով Ներսէս վերադարձաւ Հայաստան , ուր մեծ պատիւներով ընդունուեցաւ :

Ներսէս անկէ ետքը սկսաւ Հայաստանը շինարարել ու բարեկարգել : Շինեց դպրոցներ , որոնց մէջ Հայ տղաները կը սորվէին յունարէն և ասորերէն : Հայերէն գիրչկար տակաւին : Շինեց նաև վանքեր , հիւանդանոցներ , աղքատանոցներ , ծերանոցներ , բորոտներու տուններ , պանդոկներ և այլն :

Այս բոլոր մեծ գործերուն համար Ներսէս շատ սիրելի եղաւ , յարգուեցաւ և կոչուեցաւ Մեծն Ներսէս :

Հարցարան. — Ո՞վ էր Մեծն Ներսէս. — Մանկութեան ատենն ո՞ր մեծցաւ ու կրթուեցաւ. — Ի՞նչպիսի տղայ էր. — Ներսէսը ի՞նչ ընտրեցին. — Ի՞նչ ու շնորհունեց. — Ո՞վ ստիպեց սր ընդունի. — Կաթողիկոս ձեռնադրուելու համար ո՞ր դնաց. — Իրեն հետ քանի՞ զինուոր ձեռնադրուեցաւ. — Քանի՞ իշխան , քանի՞ զինուոր. — Ձեռնադրութեան ատեն ի՞նչ պատահեցաւ. — Ի՞նչ քանի՞ զինուոր շինեց Ներսէս. — Ի՞նչ կոչուեցաւ :

Քարոյական քեյադուրիւն. — Ներսէսի գեմքը թէև եկեղեցական պատմութեան կը պատկանի , բայց Հայոց պատմութեան մէջ խաղացած իր քաղաքական մեծ դերին համար կ'արժէ մանրամասն ճանչնալ զայն , նոյնիսկ անոր հեքթաթունակ պատմաբան ճանչնալ զայն , նոյնիսկ անոր հեքթաթունակ պատմաբան ճանչնալ զայն , որոնք մասնուկ միտքերու լաւագոյն սնունդներէն են : Ամէնէն աւելի պէտք է շեշտել անոր շինարարի առաքինութիւնը :

### Ի՛Է. Դ Ա Ս

#### ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ԱՔՍՈՐԻ ՄԷՉ

Հայերը թագաւոր մը ունէին , անոր անունը Արշակ էր :

Արշակ մեծ կարեւորութիւն կուտար Ներսէսի խօսքերուն և խրատներուն : Մեծն Ներսէս ալ անոր կ'օգնէր իր խորհուրդներովը :

Յոյներուն թագաւորը անգամ մը թշնամի էղաւ Արշակին և պատրաստուեցաւ Հայաստան արշաւելու համար :

Արշակ շատ վախցաւ : Խնդրեց Մեծն Ներսէսէն որ խորհուրդ մը տայ իրեն և ազատէ զինքը Յոյներու թագաւորին ձեռքէն :

Սեծն Ներսէս ուզեց երթալ Պոլիս և միջնորդութիւն ընել Յոյներու թագաւորին և Արշակին միջև : Առաւ իր հետը բազմաթիւ թանկագին ընծաներ և մէկ քանի իշխաններ ու ճամբայ ելաւ :

Յոյներու թագաւորին անունն էր Վաղէս , որ մեծ պատիւով ընդունեց Մեծն Ներսէսը : Բայց վերջը թշնամացաւ :

Վաղէս մէկ հատիկ զաւակ մը ունէր , որ ծանր կերպով հիւանդացաւ , բոլոր բժիշկները ամէն ճիգ թափեցին , բայց չկրցան բժշկել : Այն

ատեն Վաղէս խնդրեց Ս. Ներսէսէն որ աղօթք մը կարդայ հիւանդին վրայ և բժշկէ : Մեծն Ներսէս ըսաւ .

— Եթէ ճշմարիտ կերպով հաւատաս Բրիատոսի , կ'աղօթեմ և թերևս Աստուած կը բժշկէ մանուկը , եթէ ոչ՝ պիտի մեռնի ան տասնևհինգ օրէն :

Վաղէս Ս. Ներսէսի խօսքին կարեւորութիւն չտուաւ : Տղան տասնևհինգ օրէն մեռաւ : Այն ժամանակ Վաղէս բարկացաւ և ըսաւ .

— Տարէք անապատ , ամայի կղզի մը աքսորեցէք Ներսէսը և իր հետ գտնուող բոլոր եկեղեցականները :

Հրամանը կատարուեցաւ : Այն կղզին անբեր և անապատ ժայռ մըն էր , ուր մարդ և գազան չէր բնակեր , ջուր չի կար , բնակավայր չի կար :

Այս սոսկալի անապատը արսորուեցան Ս. Ներսէս և իր հետիները : Երկու երեք օր անօթի Ներսէս և իր հետիները : Երկու երեք օր անօթի մնացին : Անօթութենէն ու ծարաւէն նեղուեցան : Ս. Ներսէս ծունկի եկաւ և աղօթեց : Յանկարծ Ս. Ներսէս ծոլը ալեկոծեցաւ , ծովին ջուրը հով մը ելաւ , ծովը ալեկոծեցաւ , ծովին ջուրը ձուկերով միասին կղզիին վրայ սկսաւ նետուիլ : Չուրը քաշուեցաւ և ձուկերը մնացին : Չուրին հետ մէկտեղ վառելու փայտեր ալ նետուեցան : Այն ատեն կրակ վառեցին , ձուկերը եփեցին ու կշտացան : Ս. Ներսէս իր աղօթած տեղը փորել

տուաւ և անկէ բղխեցաւ անուշ ջուր ու սկսաւ վազել: Այդ ջուրէն ալ խմեցին:

Վաղէս գիշեր մը սոսկալի երազ մը տեսաւ: Ս. Ներսէսը երեւցաւ իրեն, ձեռքը սուր մը բռնած: Վաղէս շատ վախցաւ և անկողինէն ելնելով դուրս փախաւ:

Վաղէսին տեղ ուրիշ բարեպաշտ մարդ մը եղաւ թագաւոր: Ան ուզեց Ս. Ներսէսը ազատել, բայց չէր գիտեր որ ո՞ղջ էր թէ մեռած: Անգամ մը ծովին վրայ պաշտող նաւեր տեսան որ կողմին մէջ կրակ կը վառի, մօտեցան և իմացան թէ Ս. Ներսէս և իրեն հետինները ողջ են: Լուր տարին Պոլիս: Թագաւորը նաւեր ղրկեց և ամէնքն ալ ազատեց: Պատուեց Ս. Ներսէսը և մեծ ընծաներով Հայաստան ղրկեց, խոստացաւ Հայերուն հետ բարեկամ ըլլալ:

Հարցարան. — Ո՞վ էր Արշակ. — Յոյներուն թագաւորը ի՞նչ ըրաւ. — Արշակ ի՞նչ ըրաւ. — Վաղէս ի՞նչ ո՞ւ աքսորեց Ս. Ներսէսը. — Կողմին ի՞նչ պէս տեղ էր. — Ի՞նչ պէս կերակրուեցան. — Վաղէս ի՞նչ պէս մեռաւ. — Ս. Ներսէս ի՞նչ պէս ազատուեցաւ:

Յարոյական քելարուքիւն. — Արշակի մասին քիչ մը աւելի լայն ծանօթութիւններ տալով կարելի է ամոր բարոյական դիմագծութիւնը աւելի որոշ դարձնել, եթէ աշակերտներուն համար Ներսէսի դէմքը արդէն իսկ բաւական չէ այս դասին մէջ ևս:

ԻԸ. ԴԱՍ

Ձ Ի Բ Ա Ի Ի Կ Ռ Ի Ի Ը

Ս. Ներսէս երբ տակաւին Պոլիս կը գտնուէր և նոր ազատուած էր, լուր առաւ որ Հայոց թագաւոր Արշակը մեռեր է: Յոյներուն թագաւորը Արշակին տեղ թագաւոր պսակեց Արշակի որդին Պապը, որ նոյնպէս Պոլիս կը գտնուէր:

Մեծն Ներսէսի և Պապի հետ Հայաստան եկան նաև բազմաթիւ Յոյն զինուորներ: Պարսիկները կ'ուզէին Հայոց երկիրը գրաւել: Արշակի մահէն ետքը յարձակեցան Հայաստան և ամէն տեսակ չարիքներ ըրին:


Մերուժաւն անունով հայ նախարար մը կար: Ան պարսիկներուն հետ բարեկամ եղաւ և կ'ուզէր Հայոց թագաւոր ըլլալ: Մերուժաւն չար մէկն էր, էր ազգին դէմ ամէն չարիք կ'ընէր, որպէս զի սիրելի ըլլայ Պարսից թագաւորին և Հայոց թագաւորութիւնը ինք առնէ:

Նա Պարսիկներուն գլուխն անցած մտաւ Հայաստան և սկսաւ գիւղերը, քաղաքները այրել, ժողովուրդը կոտորել: Երբ որ լսեց թէ Ս. Ներսէս և Պապ թագաւորը Հայաստան կուգան, անոնց առջևը ելաւ կռուելու համար:

Երկու կողմի զինուորները նպաստ լեռան մօտ,

դաշտի մը մէջ նստեցան : Հայոց քաջերը և յոյն զինուորները կարգով շարուեցան և սկսան յարձակիլ Պարսիկներուն վրայ :

Պապ թագաւորը և Ս. Ներսէս մէկ քանի զինուորներով լեռը ելան և բարձրէն կը դիտէին



Մերուժան շամփուրով կը պսակուի

պատերազմը : Երբոր պատերազմը սկսաւ, Ս. Ներսէս ձեռքերը բազկատարած սկսաւ աղօթել : Քանի ձեռքերը տարածած կ'աղօթէր, հայ զինուորները կը յաղթէին և Պարսիկները շարդելով կը փախցնէին : Բայց երբ Ս. Ներսէս աղօթելէն կը

յողնէր և ձեռքերը վար կ'առնէր, Հայերը կը յաղթուէին :

Այս բանը տեսնելով երկու զինուորներ գացին Ս. Ներսէսի ձեռքերը վեր բռնեցին, որ չյողնի : Հայերը սոսկալի շարդ մը տուին Պարսիկներուն և մէկ մասն ալ փախցուցին : Մերուժանն ալ տեսնելով որ պիտի բռնուի, ձի հեծած սկսաւ արագ արագ փախչիլ : Բայց Սմբատ Բագրատունի հայ իշխանը հասաւ անոր ետեւէն և բռնեց զայն :

Բռնուած տեղը հովիւներ կրակ վառած էին և միս խորովելու համար շամփուրները կրակը դրած էին : Սմբատ առաւ այդ շամփուրներէն մէկը, կրակին մէջ բոլորովին կարմրացուց ու կլոր օղակ մը շինելով դրաւ Մերուժանին գլուխը և ըսաւ .

— Կը պսակեմ՝ քեզ, ո՛վ Մերուժան, որովհետեւ Հայոց թագաւոր ըլլալ կը փափաքէիր :

Այսպէս մեռաւ Մերուժան, որ մատնիչ մըն էր :

**Հարցարան.**—Արշակին տեղ ո՞վ եղաւ Հայոց թագաւոր. — Ո՞վ թագաւոր պսակեց. — Պարսիկները ի՞նչ կ'ուզէին. — Ո՞վ էր Մերուժան. — Ինչ ո՞ւր Պարսիկներուն օգնեց. — Երկու կողմերը ո՞ր հասնուեցան իրարու. — Ս. Ներսէս երբ կ'աղօթէր՝ ի՞նչ պատահեցաւ. — Մերուժան ի՞նչպէս սպանուեցաւ :

**Ռարոյական քննադրութիւն.** — Մերուժանի մատնութիւնը և դաւաճանութիւնը խորհրդածութեան նիւթ ընել :

ԻԹ. ԴԱՍ

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Նպատ լեռան քով մղուած պատերազմին մէջ նշանաւոր եղաւ Մուշեղ Մամիկոնեան՝ Հայոց զօրապետը :

Մուշեղ Ս. Ներսէսի և Պապին հետ մէկտեղ Պոլիսէն Հայաստան եկաւ , մեր հայրենիքը ազատելու համար : Մուշեղ այնքան քաջ էր և քաջութեան գործեր ըրած էր, որ ամէնքը զինքը կը դովէին : Հայոց զինուորները երբ թշնամիին վրայ յարձակէին կ'ըսէին . «Տէրոջ և Մուշեղի սուրը» : Ըսել կ'ուզէին թէ իրենց ձեռքի սուրերը Աստուծոյ և Մուշեղի սուրին նման անյաղթելի են :

Պարսիկներուն թագաւորը կ'ուզէր անպատճառ գրաւել Հայաստանը, ատոր համար անձամբ զօրք ժողվեց և մեր երկրին վրայ քալեց : Մուշեղ երբ որ իմացաւ թէ պարսից թագաւորը Հայաստան կուգայ, կարգի դրաւ իր զինուորները և անոր դէմը ելաւ :

Հայոց զօրապետը ճերմակ ձիի մը վրայ նստած առաջ կը քայլէր և կը քաջալերէր իր զինուորները : Անոնք յարձակեցան Պարսիկներուն վրայ և սկսան ջարդել : Անոնք Մուշեղը տեսնելով սարսափած սկսան ետ ետ քաշուիլ, կռնակ դարձու-

ցին և փախան վատաբար : Պարսիկներու թագաւորն ալ ձիի մը վրայ հեծած փախչելով՝ հազիւ կրցաւ ինքզինքը ազատել :

Հայերը առին թագաւորին վրանը և դանձերը, գերի բռնեցին անոր թագուհին և միւս կիները : Բայց Մուշեղ պատիւով պահեց զանոնք, երբեք անոնց մտաս չհասցուց և ետքը Պարսից թագաւորին ղրկեց : Պարսիկ մեծամեծներէն և զօրավարներէն վեց հարիւր հոգի բռնելով անոնց կաշին քերթել տուաւ, տիկ հանելով՝ խոտով լեցնել տուաւ :

Նախորդ դասին տեսաք թէ Հայերը ինչպէս յաղթեցին Պարսիկներուն Նպատ լեռան մօտերը : Այդ պատերազմին մէջ եթէ Մուշեղը չըլլար, Հայերը դժուար կը յաղթէին : Պարսիկներուն զօրքերը շատ էին, անթիւ, անհամար : Ամէն ազգէ կ'ային : Պարսիկներու թագաւորին հետ ուրիշ երկու երեք թագաւորներ ալ եկած էին՝ Հայոց դէմ կուռելու :

Երբ Ս. Ներսէս Նպատ լեռան վրայ կ'աղօթէր, Մուշեղ հայ զինուորները մէկ կողմ շարեց, Յոյները միւս կողմ : Երբ պատերազմը սկսաւ, Մուշեղ կայծակի պէս ամէն կողմ կը վազէր, ամէնուն կը հասնէր, կը քաջալերէր : Հայերը առիւծի պէս կը յարձակէին և կը գոռային, իսկ պարսիկ զօրքերը կը փախչէին սարսափած : Պարսից թագաւորը լեղապատառ, հետիոտն փոսէ



Մուսեղ Մամիկոնեան

փոս ցատկելով, ծակէ ծակ սողալով օձի պէս,  
այս անգամ ալ ազատեցաւ :

Պատերազմին մէջ Մուսեղ հանդիպեցաւ Հո-  
նաց Ուռնայր թագաւորին : Ուռնայր հասակով  
չաղթանդամ մարդ մըն էր : Մուսեղ հասաւ  
անոր ետեւէն, երբ կը փախչէր : Իր երկար նիղակը  
զարկաւ անոր գլխարկին և ձիէն վար ձգեց զայն :  
Քաշեց հանեց իր սուրը և անոր ճաղատ գլուխին  
վրայ ծեծելով ըսաւ .

— Եթէ դու Ուռնայր ես, ես ալ Մուսեղ  
եմ, բայց դու շնորհակալ եղիր որ թագ ունիս,  
վասն զի ես թագաւոր մարդ չեմ սպաններ :

Այս ըսելով թող տուաւ որ 8 ձիաւոր զին-  
ուորներով փախչի իրենց երկիրը : Պատերազմէն  
ետքը մէկ քանի հատ նախարարներ նախանձելով  
Մուսեղի վրայ, Պապ թագաւորին գացին և ըսին .

— Տէր արքայ, Մուսեղը Պարսիկներուն բա-  
րեկամ է և քեզի թշնամի : Երբ որ Պարսից թա-  
գաւորին կիները գերի բռնած էր, ետ դարձուց .  
Ուռնայր թագաւորն ալ չսպաննեց և թողուց որ  
փախչի : Քեզ պիտի սպաննէ :

Պապ թագաւորը մօտը կանչեց Մուսեղը և  
ըսաւ .

— Դուն կ'երեւի թէ Պարսիկներուն բարե-  
կամ ես . ինչո՞ւ Ուռնայրը արձակեցիր առանց  
սպաննելու :

Մուսեղ համարձակ կերպով պատասխանեց .  
— Տէր արքայ, աղէկ է որ չարախօսու-  
թիւններու ականջ չկախես : Ես Ուռնայրը կրնայի  
սպաննել, բայց չսպաննեցի, որովհետեւ անիկս

Թագ ունի : Ով որ թագ ունի ես չեմ կրնար ձեռք վերցնել անոր վրայ : Եթէ կ'ուզէիր թող դուն երթայիր և ձեռքովդ սպաննէիր :

Պապ թագաւորը համոզուեցաւ թէ Մուշեղ յանցանք չունի : Գրկեց զայն և իր քովը նստեցուց :

Մուշեղ ուրիշ շատ քաջութիւններ ալ ըրաւ և մեծ անուն հանեց : Բայց իր նախանձորդները խարդախութիւնով օր մը սպաննել տուին Մուշեղը : Երբ որ Մուշեղի մարմինը իրեն ընտանիքին մօտ տարին, անոր տունիները չէին հաւատար մեռած ըլլալուն, թէև կը տեսնէին որ գլուխը մարմինէն կտրուած դատուած էր : Անոնք կ'ըսէին .

— Անիկա բաղմաթիւ պատերազմներ ըրած է և վէրք մը անգամ առած չէ . նեա մը անգամ դպած չէ անոր : Ի՞նչպէս կրնայ մեռած ըլլալ : Անպատճառ յարութիւն կ'առնէ ան :

Այս ըսելով անոր գլուխը մարմինին կարել տուին և հանեցին աշտարակին տանիքը, և կ'ըսէին .

— Որովհետև քաջ մարդ մըն էր, Առէկըներ կ'իջնեն կը լիզեն անոր վէրքերը և կը ողջնցընեն զայն :

Բայց քանի մը օր ետքը վար իջեցուցին և մեծ սուգով թաղեցին : Բոլոր Հայերը լային Մուշեղի վրայ :

Հարցարան. — Հայոց սպարապետը ո՞վ էր. — Մուշեղ Ի՞նչ ըրաւ Պարսից թագաւորին դէմ. — Անոր կեներն Ի՞նչ ըրաւ. — Ո՞րք

էր Ուռնայր. — Մուշեղ Ի՞նչ ըրաւ և ըսաւ անոր. — Նախանձորդները Ի՞նչ ըսին Պապին. — Պապ Ի՞նչ ըրաւ. — Մուշեղ Ի՞նչ պատասխանեց. — Ի՞նչպէս մեռաւ. — Իր ընտանիքը Ի՞նչ կ'ըսէին և Ի՞նչ ըրին :

Քարոյական քելարուքիւն. — Ամէնէն աչքառու թելադրութիւնը այս դասին մէջ Մուշեղի վերաբերումն է թշնամի կեներուն տկար արարածներուն հանդէպ, ինչպէս նաև Ուռնայրի հանդէպ անոր ցոյց տուած մեծանձնութիւնը :

Լ. ԴԱՍ

Վ Ա Ր Ա Չ Դ Ա Տ


Հայոց Պապ թագաւորը ազգական մը ունէր, անոր անունն էր Վարազդատ : Դեռ փոքրիկ տղայ էր Վարազդատ, երբ Յոյներու թագաւորին մօտ գնաց : Բաջ էր և շատ կորովի կերպով նեա կը նետէր : Նա նշանաւոր եղած էր իր քաջութիւններով : Կատարեալ կտրիճ մըն էր ան :

Անգամ մը Վարազդատ պատերազմի գնաց Յոյներու զինուորներուն հետ : Յոյներուն թշնամիները հսկայ, անգութ և քաջ մարդեր էին : Անոնք կը կոչուէին Լոնգոքարսացիներ :

Պատերազմի միջոցին Վարազդատ նետուեցաւ առաջ : Բաղմաթիւ թշնամիներ անմիջապէս Վարազդատին շուրջը բռնեցին : Անոնցմէ հինգ հոգի խոշոր մարդեր էին, սուր դանակներով և վա-

հաններով զինուած էին և յարձակեցան Վարազդատի վրայ : Ի՞նչ մնաց պիտի սպաննէին զայն :

Բայց Վարազդատ յանկարծ նետուեցաւ անոնց վրայ , մէկիկ մէկիկ սպաննեց հինգն ալ :




Վարազդաս հինգ Լոնգոբարսացիները կ'սպաննէ

Թշնամիները Վարազդատի այս քաջութիւնը տեսնելով սարսափեցան և սկսան փախչիլ դէպի բերդերը : Վարազդատ վաղեց անոնց ետեւէն : Յարձակեցաւ բերդի մը վրայ և տասներեօթը հոգի ետեւէ ետեւ նետով սպաննեց և ինքը չիմասուեցաւ :

Երբ որ Յոյներու թագաւորը իմացաւ թէ

Վարազդատ Հայոց Պապ Թագաւորին ազգականն է , շատ ուրախացաւ և պատուեց զայն : Եւ Պա-



Եփրատ գետը

պին մեռնելէն ետքը Հայոց թագաւոր պսակեց Վարազդատը :

Նա թագաւոր ըլլալէն ետքը ճամբայ ելաւ դէպի Հայաստան : Ճամբան հանդիպեցաւ բազմաթիւ աւազակներու , որոնք ուզեցին զինքը կողպտել : Վարազդատի հետ գտնուողներէն մէկ քանինն ունեցածները առին և սկսան փախչիլ :

Քաջ Վարազդատը անմիջապէս յարձակեցաւ անոնց ետեւէն ու վազեց մինչև Եփրատ գետին եզերքը : Աւազակները գետին վրայի կամուրջէն անցան ու կամուրջին փայտերը քանդեցին , որպէս զի իրենց ետեւէն չկրնան գալ :

Վարազդատ այս բանը տեսնելով բարկացաւ և մէկ ոստուժով գետին մէկ կողմէն միւսը ցատկեց : Աւազակները երբ տեսան Վարազդատի այս քաջութիւնը , սարսափեցան , իրենց գողցած բաները թողուցին և թռան փախան :

Ան Հայաստան գալով եղաւ թագաւոր :

Հարցարան. — Ո՞վ էր Վարազդատ. — Ի՞նչպէս մէկն էր. — Ո՞ր կը գտնուէր. — Լո՞նգորտացիներն ի՞նչ ըրաւ. — Նետով քանի՞ հոգի սպաննեց ետեւէ ետեւ. — Յոյներուն թագաւորը ի՞նչպէս վարձատրեց անոր քաջութիւնը. — Ճամբան ինչերո՞ւ հանդիպեցաւ. — Աւազակներն ի՞նչ ըրին Եփրատի կամուրջը. — Վարազդատ ի՞նչ ըրաւ. — Աւազակներն ի՞նչ ըրին :

Քարոյական քելպրուրիւն. — Հայերը միշտ հաւատարիմ գտնուած են իրենց տէրերուն կամ իշխաններուն՝ իրենց հայրենիքէն դուրս, և ատով պատիւ բերած են իրենց ցեղին. Վարազդատ ատոնցմէ էր :

### ԼԱ. ԴԱՍ

#### Ս. ՍՍ. ՀԱԿ ՊԱՐԹԵԻ

Ս. Ներսէս ամուսնանալով որդի մը ունեցած էր. անոր անունը դրած էր Սահակ : Սահակ բարի, աղնիւ և խելացի տղայ մըն էր : Նա իր մանկութիւնը անցուց Կեսարիայի և Պոլիսի մէջ : Գնաց դպրոցներ, սորվեցաւ յունարէն լեզուն : Յունարէնը հայերէնի պէս կը խօսէր և կը գրէր : Ան սորվեցաւ նաև ուրիշ լեզուներ, ինչպէս՝ ասորերէն և պարսկերէն : Սորվեցաւ ուրիշ շատ բան :

Յոյներուն դպրոցներուն մէջ այնչափ նշանաւոր եղաւ որ յոյն ուսուցիչները զայն կը գովէին և իրենց յոյն աշակերտներուն կ'ըսէին .


— Տեսէք, Սահակը յոյն չըլլալով յոյնէ մը աւելի աղէկ կը սորվի իր դասերը. նայեցէ՛ք և օրինակ առէք անկէ :

Յոյն դպրոցներէն ընթացաւարտ եղնելէն ետք , Սահակ երկար ժամանակ մնաց Պոլիսի մէջ : Յոյն թագաւորի պալատին մէջ շատ պատիւներ և կարեւոր պաշտօններ ստացաւ :

Սահակ ամուսնացաւ աղնիւ , համեստ աղջկայ մը հետ : Ունեցաւ սիրուն դստրիկ մը՝ Սահակակնոյ՝ անունով :

Երբոր Ս. Ներսէս մեռաւ, Հայոց թագաւորը,

նախարարները և ժողովուրդը փափաքեցան որ Ս. Ներսէսի յաջորդ կարգեն անոր որդին Սահակը :



Ս. Սահակ Պարսեւ

Փառաւոր կերպով կաթողիկոս օծուեցաւ ան և

նստաւ հայրապետական աթոռին վրայ : Հօր մը պէս սկսաւ խնամել հայ ժողովուրդը, իր հօրը Ս. Ներսէսի նման ամէնքէն սիրուեցաւ : Թագաւորն ու իշխաններն անգամ զայն կը յարգէին :

Պարսից թագաւորը չէր սիրեր Ս. Սահակը , որովհետեւ Յոյներուն բարեկամ էր ան : Օր մը Ս. Սահակ Պարսից թագաւորին քով գնաց և անոր առջև ելաւ : Իր բարձր հասակով, գեղեցիկ դէմքով և սպիտակ մօրուքով կանգնեցաւ թագաւորին առջև : Սկսաւ խօսիլ պարսկերէն լեզուով : Այնքան գեղեցիկ խօսեցաւ և խելացի խօսքեր ըրաւ , որ պարսիկներուն թագաւորը զարմացաւ : Ս. Սահակ հայրապետը ըսաւ անոր .

— Տէ՛ր արքայ , սուտ զրպարտութիւններու ականջ մի՛ կախեր : Մենք Հայերս քեզի թշնամի չենք : Եթէ ազատ ձգես մեր կրօնքը և մեզ չհալածես , մենք քու բարեկամը կ'ըլլանք , մեր զինուորները և քաջերը կը կռուին քեզի համար :

Ուրիշ շատ համողիչ խօսքեր ըրաւ և մեծ պատիւներ ստացաւ : Պարսից թագաւորը իր ստորագրութեամբ հրաման մը հանեց և պատուիրեց որ Սահակը և անոր գերդաստանը յարգեն , Հայերուն վրայ աղէկ աչքով նային ու չհալածեն :

Ս. Սահակ նշանաւոր գործ մըն ալ ըրաւ . քաջալերեց Ս. Մեսրոպը որ հայերէն գիրերը գանէ , որովհետեւ մենք Հայերս տակաւին գիրեր

չունէինք : Ս. Սահակ ուրիշ օգտակար դոր-  
ծեր ալ ըրաւ և խոր ծերութեան մէջ մեռաւ :  
Ի՞նչոր Հայերը սուգ բռնեցին ու լացին անոր մահը :

Հարցարան.—Ո՞վ էր Ս. Սահակ.— Ի՞նչպէս մէկն էր.— Ի՞ր  
մանկութիւնը ո՞ր անցուց.— Ի՞նչ լեզուներ գիտէր.— Ի՞ր աղջկան  
անունը ի՞նչ էր.— Ի՞նչո՞ւ կը յարգէին զինքը.— Պարսից թագաւորին  
ի՞նչ խօսեցաւ.— Ի՞նչ պատիւներ ստացաւ.— Ուրիշ ի՞նչ նշանաւոր  
գործ ըրաւ :

Քարոյական քելպորութիւն.— Արժանացնել աշակերտնե-  
րու մտքին մէջ Ս. Սահակի արժանիքը եբրեւ բարի աշակերտ,  
խնամող հայր, խոհական կաթողիկոս ևն. :

### ԼԲ. ԴԱՍ

#### Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇԹՈՅ

Ս. Մեսրոպ վարդապետ Ս. Սահակ հայրա-  
պետի հետ նշանաւոր եղաւ : Ս. Մեսրոպ աղքատ  
ծնողքի մը զաւակն էր : Անոր հօրը անունն էր  
Վարդան : Նա պզտիկուց ուսումնասէր, բարի  
տղայ մըն էր . կ'ուզէր շատ բան սորվիլ :

Իր աշխատասիրութիւնովը շատ առաջ գնաց :  
Սորվեցաւ ասորերէն, պարսկերէն և յունարէն  
լեզուները : Երբոր դպրոցէն ելաւ, զինուոր եղաւ :  
Եւ որովհետեւ կրթուած էր և լեզու գիտէր, պա-  
տիւ վաստկեցաւ, և օր մըն ալ Հայոց թագա-  
ւորին քարտուղար՝ այսինքն գիրերը գրող եղաւ :

Ս. Մեսրոպ կը փափաքէր վարդապետ ըլլալ,  
աւտոր համար հրաժարեցաւ իր պաշտօնէն : Բայց  
Ս. Մեսրոպի տեղը մէկը չկար որ անոր գործը  
անոր չափ աղէկ կ'ատարէր :

Ս. Մեսրոպ վարդապետ ձեռնադրուեցաւ : Նա  
Ս. Սահակինման միշտ ազօթքի ետեւէ էր և ունէր  
աշակերտներ :

Նա տեսնելով որ մենք Հայերս հայերէն գիր  
չունինք, շատ տրամեցաւ : Մինչև այդ ժամանակ-  
ները Հայերը եթէ նամակ կամ ուրիշ բան գրէին,  
կամ յունարէն, կամ պարսկերէն կը գրէին և  
կամ ասորերէն : Մեր պապերէն շատերը չէին հաս-  
կընար այդ լեզուները : Եկեղեցիի աղօթքներն անգամ  
ասորերէն կամ յունարէն լեզուներով կը կատարէին :


Նա խորհեցաւ հայերէն գիրեր գտնել, որ գոնէ  
եկեղեցիներուն մէջ հայերէն կարդան և աղօթեն :  
Իր մտածումը յայտնեց Ս. Սահակին, որ շատ  
ուրախացաւ : Երկուքը մէկ գացին Հայոց Վաւա-  
շապուհ թագաւորին քով : Ս. Սահակ ըսաւ .

— Տէր արքայ, տե՛ս Մեսրոպ վարդապետը  
խորհեր է հայերէն գիր հնարել : Եթէ այս բանը  
յաջողի շատ օգտակար պիտի ըլլայ մեր ազգին :

Վաւաշապուհ թագաւորը շատ ուրախ եղաւ  
որ իր թագաւորութեան օրով Ս. Մեսրոպի պէս  
մէկը հայերէն գիր գտնելու գաղափարը ունեցեր  
է : Ինքը՝ թագաւորն ալ սկսաւ աշխատիլ :

Անոնք շատ աշխատեցան, հայերէն գիրեր

գտնելու համար, բայց անօգուտ եղաւ : Ս. Մես-  
րոպ երկար ճամբորդութիւններ ըրաւ, Հայաստա-



Ս. Մեսրոպ Մաշտոց  
նէն դուրս շատ երկիրներ պտտեցաւ, բազմաթի-

գրատուններ այցելեց և հայերէն գիրով գրուած  
գիրք փնտռեց, բայց չգտաւ :

Նա գիշեր ցորեկ կը մտածէր թէ ի՞նչպէս  
ընէ որ հայերէն գիր գտնէ : Օր մը տրտում ար-  
խուր նստած էր Ս. Մեսրոպ : Աստուծմէ կը խընդ-  
րէր որ օգնէ իրեն, որովհետև յուսահատած էր :

Այդ տխուր վիճակին մէջ քունը տանելու  
պէս եղաւ : Իրեն այնպէս երեւցաւ որ երկիրէն  
ձեռք մը եկեր քարի մը վրայ կը գրէր հայերէն  
այբուբենը :


Յանկարծ արթնցաւ . հասկցաւ որ կէս քունի  
մէջ էր : Գրուած գիրերուն ձեւը իր միտքին մէջն  
էր : Անմիջապէս առաւ փետուրէ գրիչը, թուղթը  
ձեռք առաւ ու, շնորհակալ ըլլալով Աստուծոյ,  
սկսաւ մէկիկ մէկիկ գրել հայերէն Ա. Բ. Գ. ը :

Անկէ ետքը Ս. Մեսրոպ սկսաւ իր գտած  
գիրերով թարգմանել Աստուածաշունչը : Ու տե-  
սաւ որ աղէկ էր : Այդ ժամանակ ինքը Հայաս-  
տանէն դուրս կը գտնուէր : Երբ գիրերը հնարեց,  
ճամբայ ելաւ Հայոց երկիրը երթալու համար :

Վաւաճապուհ թագաւորը և Ս. Սահակ երբ  
լսեցին որ Ս. Մեսրոպ հայերէն գիրերը գտած  
կուգայ, ճամբայ ելնելով անոր առջեւը ելան :  
Իրարու հանդիպելով համբուրուեցան և ուրախա-  
ցան գիրերը գտնուած ըլլալուն համար :

Անկէ ետքը շատ դպրոցներ բացին, բազմա-  
թիւ տղաքներ հաւաքեցին ու անոնց սորվեցուցին

հայերէն նոր գիրերը և լեզուն : Այդ աշակերտները ամէնքն ալ նշանաւոր մարդեր եղան . իրենց ուսուցիչներուն պէս իրենք ալ աշխատեցան , շատ յունարէն և ասորերէն գիրերը թարգմանեցին ,



Օսականի Ս. Մեսրոպ եկեղեցին

շատ հայերէն գիրքեր գրեցին : Այդ ժամանակը գեղեցիկ շրջան մը եղաւ և կոչուեցաւ Ոսկեդար :

Երբոր Ս. Մեսրոպ մեռաւ բոլոր հայերը սուգ բռնեցին : Անոր գերեզմանին փրայ եկեղեցի շինեցին և ամէն տարի ուխտի կ'երթային : Ս. Մեսրոպի գերեզմանը մինչև հիմակ կայ . ան կը գտնուի Օշական գիւղին մէջ , Էջմիածինի մօտ :

Հարցարան.—Ո՞վ էր և որո՞ւ որդի էր Ս. Մեսրոպ.—Տղա յու թեանը ի՞նչպէս էր.—Ի՞նչ պաշտօն առաւ.—Հայերը գիր ունէ՞ին.—Ի՞նչ գիր կը գործածէին.—Ս. Սահակ որո՞ւ տարաւ Ս. Մեսրոպը.—

Հայերէն գիրերը ի՞նչպէս դառաւ Ս. Մեսրոպ.—Ո՞ւր.—Հայաստան դառնալով ի՞նչ ըրաւ.—Երբ մեռաւ , Հայերը ի՞նչ ըրին.—Ս. Մեսրոպի գերեզմանը ո՞ւր կը գտնուի :

Բարոյական քիչադուրիւն.—Փափաքելի է որ ուսուցիչները ծանրանան ամէնէն աւելի այն բանին վրայ թէ Մեսրոպ , աղքատիկ ծնողքի զաւակ , իր ջանասիրութեամբը մեծ մարդ մը դարձաւ : Պէտք չէ ուրեմն արհամարհել աղքատիկ տղաները , ո՞վ գիտէ , ապագային ի՞նչպիսի անձեր պիտի ելնեն անոնց մէջէն :

### Լ Գ . Դ Ա Ս

#### Ս . Ղ Ե Ի Ո Ն Դ Ե Բ Է Յ

Ս. Սահակի և Ս. Մեսրոպի աշակերտներէն մէկն էր Ս. Ղեւոնդ երէցը , որ հայրենասէր ու շատ նշանաւոր մարդ մըն էր : Ս. Ղեւոնդ համեստ ծնողքի մը զաւակն էր : Իր փոքր եղած ատենն ալ շատ բարի , ազնիւ ու խելացի էր :

Աշխատելով սորվեցաւ յունարէն , ասորերէն և պարսկերէն լեզուները : Այնքան գեղեցիկ կը խօսէր , այնքան պարզ և հասկնալի կերպով կը խօսէր , որ ամէնքը կը հիանային :

Ան գնաց Պոլիս , ուր յոյն դպրոցներուն մէջ աշխատեցաւ նոր նոր բաներ ուսանիլ , ապա դարձաւ Հայաստան : Ս. Ղեւոնդ քահանայ ձեռնադրուեցաւ և սկսաւ մխիթարել ժողովուրդը : Անոր նշանաւոր գործերէն մէկը պիտի պատմեմ :

Հայերը իրենց կռիւներով, զիրար չսիրելով տկարացած էին, այդ պատճառով Պարսիկներու թագաւորը Հայաստան արշաւելով մեր երկիրը իր իշխանութեան տակ առաւ: Հայերուն թագաւորը գահէն ձգեց և տեղը ուրիշ մը չգրաւ:

Պարսիկներուն թագաւորը կ'ուզէր որ Հայերը քրիստոնէայ չըլլան, այլ Պարսիկներուն պէս կրակը պաշտեն: Ատոր համար, որ մը նամակ մը գրեց հայ նախարարներուն և ըսաւ.

— Որոշած եմ պատերազմի երթալ իմ երկրին արեւելեան կողմը գտնուած մեր թշնամիներուն դէմ: Երբ որ այս նամակս առնէք, առանց դանդաղելու շուտ մը ձիաւոր զօրքեր ժողվեցէք ու եկէք ինձի միացէք՝ ճամբայ ելնելէս առաջ:

Հայ նախարարները, որովհետև տիրասէր էին, շուտով պատրաստուեցան և ճամբայ ելան: Պարսից թագաւորը շատ գոհ մնաց: Կռիւին մէջ հայ քաջերը յաղթեցին Պարսիկներու թշնամիին:

Թագաւորը ուրիշ ազդեցիկ, մեծ նախարարներ ալ իր մօտ կանչեց Հայաստանէն: Անոնք գացին: Թագաւորը հրաման ըրաւ որ բոլոր հայ նախարարները և զինուորները ուրանան իրենց կրօնքը, և կրակը պաշտեն: Նախարարները չընդունեցին: Թագաւորը բարկացաւ և ըսաւ.

— Բանի որ ձեր կրօնքը չէք ուրանար, ձեզ հոս վար պիտի դնեմ, պիտի չարչարեմ և մեռցնել պիտի տամ, մէկ կողմէն ալ ձեր երկիրը

պարսիկ զօրք պիտի զրկեմ որ ձեր եկեղեցիները կործանեն, ձեր կիներն ու աղջիկները սպաննեն կամ գերի բռնեն. ձեր երկիրը աւերակ պիտի դարձնեմ:

Հայ նախարարները երբ լսեցին այս խօսքերը չափազանց տխրեցան: Գիտէին որ թագաւորը իր ըսածները կրնար գործադրել: Ուստի որոշեցին երեսանց ուրանալ իրենց կրօնը: Իրենց մէջէն մէկը զրկեցին թագաւորին և ըսին անոր.

— Տէր արքայ, մենք պատրաստ ենք պաշտելու կրակը:

Թագաւորը շատ ուրախ եղաւ: Մեծ պատրաստութիւններ տեսաւ. փառաւոր կրակ մը վառել տուաւ իրենց մեհեանին մէջ և աղօթեց:

Ապա շքեղ հացկերոյթ մը տուաւ անոնց: Պատիւներ, նշաններ և թանկագին ընծաներ նուիրեց: Անոնց հետ դրաւ բազմաթիւ մոգեր (կրակի քահանաներ), որպէս զի երթան Հայաստան, եկեղեցիները կործանեն ու կրակի տաճարներ կանգնեն: Նախարարները մեծ բազմութեամբ ճամբայ ելան: Երբ տակաւին Հայաստան մտած չէին առջևէ լուր գնաց Հայոց երկիրը՝ թէ ահա ուրացող նախարարները մոգերու հետ կուգան:

Բոլոր Հայերը ոտք ելան, յուզուեցան: Չէին ուզեր իրենց կրօնքը ուրանալ: «Չենք ընդունիր, չենք ընդունիր» կ'ըսէին իրարու: Ուրացող նախարարներուն կիները, աղջիկներն ու տղաներն

անգամ ոտք ելած էին և չէին ուզեր ընդունիլ իրենց ամուսինը կամ հայրը :

Ս. Ղեւոնդ երէցն ալ սաստիկ բարկացաւ : Ան չէր գիտեր թէ նախարարները կեղծ ուրացած էին : Հետն առաւ շատ մը եկեղեցականներ և ժողովուրդ և գնաց նախարարներուն առջև :

Հայաստանի և Պարսկաստանի սահմանազուխին մօտ հայ գիւղ մը կար , անունն էր Անգղ : Ս. Ղեւոնդ գնաց եկեղեցի , պատարագի լրանալուն քարոզ մը խօսեցաւ , բորբոքեց ամէնուն սիրտերը , այնպէս որ բոլորը մէկ դուրս ելան եկեղեցիէն , գոռալով , բարկանալով , մէյմէկ մէյմէկ փայտ , կացին ու դանակ առած գացին յարձակեցան մոգերուն վրայ : Մոգպետին գլուխը պատուեցին , շատերուն վնաս հասցուցին ու փախցուցին :

Մոգպետը նախարարներուն գնաց և ըսաւ .

— Ես չեմ գար , ետ կը դառնամ : Հայերը իրենց կրօնը չեն ուրանար : Եթէ այս փոքրիկ գիւղին մէջ այսպէս ըրին , հապա միւս գիւղերն ու քաղաքներն ի՞նչ պիտի ընեն : Ես կ'երթամ կը խօսիմ մեր թագաւորին որ Հայերու կրօնքին չդպչի :

Մոգերը ետ դարձան : Իսկ նախարարները գացին եկեղեցի և հաղորդուեցան , յայտնեցին թէ իրենք կեղծ ուրացած էին : Անոնք ուխտեցին իրենց կրօնքը և երկիրը պաշտպանել , մեռնիլն անգամ աչք առնելով :

Հարցարան.—Ո՞վ էր Ս. Ղեւոնդ.—Պարսից թագաւորը ի՞նչ պէս իր իշխանութեան տակ առաւ Հայաստանը . — Ի՞նչ նամակ գրեց . — Ի՞նչ հրամայեց . — Նախարարները ընդունեցի՞ն . — Ի՞նչ սպառնալիք ըրաւ թագաւորը . — Նախարարները ի՞նչ ըրին . — Ս. Ղեւոնդ ի՞նչ ըրաւ . — Մոգպետը ի՞նչ ըսաւ . — Նախարարները ի՞նչ ըրին և ի՞նչ ըսին :

Քարոյական քիւղարութիւն . — Ղեւոնդը իբրեւ աշխատասիրութեան , անկեղծութեան , ըմբոստութեան տիպար , պէտք է լաւ շեշտել :

ԼԳ. ԴԱՍ

Ք Ա Ջ Ն Վ Ա Ր Դ Ա Ն

Ս. Սահակ հայրապետին Սահականուշ աղջիկը երեք որդի ունէր , որոնցմէ մէկին անունն էր Վարդան : Փորրիկ Վարդանը Ս. Սահակի սիրականն էր . անոր ձեռքը մեծցած ու կրթուած էր : Անկէ սորված էր յունարէն , պարսկերէն և հայերէն :

Վարդան մեծնալով եղաւ կրօնասէր և քաջ մէկը : Նա կը կռուէր իր հայրենիքը փրկելու համար թշնամիներուն ձեռքէն : Բաղմաթիւ թշնամիներու դէմ պատերազմ մը ըլլած էր Վարդան , ամէնուն յաղթած էր և ինքը չէր վնասուած :

Մոգերու գլուխը ջարդելէն ետքը , Վարդան միւս նախարարներուն հետ մէկտեղ ուխտ ըրաւ պատերազմիլ Պարսիկներուն դէմ , կամ յաղթել և կամ մեռնիլ կրօնքի և հայրենիքի համար :

Նա սկսաւ կարգի դնել հայ զինուորները , որոնք 60 հազար հոգի էին : Յանկարծ լուր եկաւ որ Հայաստանի հիւսիսային կողմը գտնուած քրիստոնեայ երկիրը ոտնակոխ կ'ընեն պարսիկ զին-



Քաջն Վարդան Մամիկոնեան

ուորները : Վարդան անմիջապէս առաւ բաւական զօրք և գնաց Պարսից դէմ :

Պատերազմը տեղի ունեցաւ Կուր գետին եզերքը : Պարսիկները մէկէն ի մէկ յարձակեցան

Վարդանի զինուորներուն վրայ , բայց Վարդան այնպիսի քաջութեամբ կռուեցաւ , որ թշնամիները ապշեցան , անոնց մէկ մասը ջարդուեցաւ , մէկ մասը Կուր գետը թափուեցաւ և միւս մասն ալ փախաւ : Պարսիկներուն թագաւորը այս բոլորը լսելով սաստիկ բարկացաւ և ահագին թիւով զինուորներ հաւաքեց , անոնց հետ պատերազմական փիղեր դրաւ և Հայաստան զրկեց : Հայերը այս լսելով փոխանակ տրտմելու աւելի ուրախացան . հայրենիքի սիրով վառեցան : Պատերաստուեցան պատերազմի : Վարդան անոնց առաջնորդն էր , Ղեւոնդ երէցը անոր հետ : Պատերազմէն առաջ Ս . Ղեւոնդ և Քաջն Վարդան կրակոտ ճառեր խօսեցան զինուորներուն : Վարդան ըսաւ .

— Ես մտած եմ շատ պատերազմներու մէջ , դուք ալ իմ հետս , մենք շատ անգամ յաղթեցինք : Ով որ փախչէր վատ է կ'ըսէինք հապա հիմա՛կ : Զվախնանք անոնց սուրերէն : Կա՛մ յաղթենք կա՛մ մեռնինք քաջի պէս :

Այս տեսակ խօսքերով քաջալերեց , վառեց ամէնքն ալ , որոնք նետուեցան առաջ , յարձակեցան Պարսիկներուն վրայ : Ամէն կողմ արիւն , թշնամիները գետին կը փռուէին : Պարսից զօրապետը տեսնելով որ այլևս չպիտի կրնայ դիմանալ , սկսաւ հրաման ընել որ իր զինուորները ետ քաշուին :

Բայց այդ միջոցին ուրացող , հայրենիքը չսիրող և վատ նախարարներ , իրենց զինուորներով

Թշնամիին կողմը անցան : Այն ատեն Պարսիկները նորէն սկսան յարձակիլ Վարդանանց վրայ : Եւ ահա Թշնամի նետ մը եկաւ Քաջ Վարդանի կուրծքը մտաւ : Նա փառք տալով Աստուծոյ հոգին աւանդեց :

Հայ զինուորները սուգ ըրին , իրենց առաջնորդը և գլուխը մեռնելէն ետքը ալ չկրցան պատերազմիլ և ետ քաշուեցան : Այդ կռիւին մէջ Հայերուն կողմէ նահատակուեցան 1036 հոգի , իսկ Պարսիկներէն մեռան 3500 հոգիէն աւելի :

Հայերը յաղթուեցան , բայց Պարսից Թագաւորը հասկցաւ որ այլևս անկարելի էր որ Հայերը ուրանային իրենց կրօնքը :

**Հարցարան.**—Վարդան որո՞ւ որդի էր.—Ուրկէ՞ ուսում առաւ.—Ի՞նչպէս մէկն էր.—Վարդան ի՞նչ ուխտ ըրաւ.—Ո՞ւր տեղ յաղթեց Պարսիկներուն.—Պարսից Թագաւորը ի՞նչ եղաւ.—Վարդան ի՞նչ ըրաւ.—Ի՞նչ խօսեցաւ զինուորներուն.—Ի՞նչո՞ւ Հայերը յաղթուեցան.—Պարսից Թագաւորը բան մը շահեցա՞ւ :

**Բարոյական քեյադրութիւն.**— Վարդանի մահը ցուցնել որպէս յաղթանակ : Վարդանանք մեռան , բայց իրենց գաղափարը կենդանի մնաց . հայրենասիրութիւն , քաջութիւն , անձնուիրութիւն կտակեցին անոնք իրենց ապագայ սերունդներուն :

Գ Ե Ր Զ



« Ազգային գրադարան



NL0412350

# “Փ Ա Ր Ո Ս,,

## ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, Չափմաֆճրչար, Յակոբեան Խան

### ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

		Ղ.ր.ժ.
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ,	Տարրական Ա.	3.50
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ,	Տարրական Բ.	4. —
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ,	Միջին Ա.	4.50
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ,	Միջին Բ.	5. —
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ,	Բարձրագոյն	12.50

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՆՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Որ իբրև դասագիրք մեծ պակաս մը լրացնելու սանձանուած է:

Գին 10 Ղ.ր.ժ.

Հայոց Պատմութեան դասագիրքերու այս շարքէն ստանալու համար դիմել «Փարոս» Հրատարակչական Ընկերութեան՝ Չափմաֆճրչար, Յակոբեան Խան, և գլխաւոր կեդրոնասեղին՝ «Լուսաղբիւր» Հրատարակչական Ընկերութիւն — Օննիկ-Փիրայրին, Պոլիս, Ամաս Ալթը, Ճամլը Խան:

Կը գտնուի նաեւ բոլոր գրավանձառներուն մօտ.